

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն
Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Համայնքների խոշորացումը՝ որպես Հայաստանի
վարչատարածքային բաժանման օպտիմալացման միջոց



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2013 ԹՎԱԿԱՆ

1. Ներածություն

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի կայացմանը զուգընթաց, որպես առանցքային հիմնախնդիր, մշտապես ընդգծվում է ՀՀ վարչատարածքային կառուցվածքը, ավելի կոնկրետ՝ նրա մասնատվածության բարձր աստիճանը: Ըստ այդ կառուցվածքի ձևավորված վարչատարածքային միավորների գերակշիռ մասը փոքրաթիվ բնակչությամբ գյուղական համայնքներ են, որոնք բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունները կամ իրականացնում են ցածր մակարդակով, կամ՝ ընդհանրապես չեն իրականացնում: Այս համայնքներում պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցները հիմնականում ուղղվում են վարչական ծախսերին՝ ծառայությունների մատուցման վրա էական ազդեցություն չբերելով, իսկ ներդրումային ծրագրերի իրականացումը դժվարանում է աշխատակազմի սահմանափակ կարողությունների պատճառով:

Նախկին՝ խորհրդային ժամանակահատվածում ստեղծված տեղական ենթակառուցվածքները, ձևավորված լինելով այն ժամանակվա կառավարման համակարգի տրամաբանությամբ, նոր իրավիճակում ոչ միայն ցանկալի արդյունք չեն ապահովում, այլ որոշ դեպքերում նաև լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն են առաջացնում:

Գործող վարչատարածքային բաժանումը էական խոչընդոտ է հանդիսանում համայնքների կարողությունների ամրապնդման, սահմանափակ ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման և տեղական ինքնակառավարման համակարգի բնականոն զարգացման համար:

Այս հանգամանքը անհնարին է դարձրել իշխանության ապակենտրոնացման հետագա խորացումը, որն առաջին հերթին ենթադրում է պետական մակարդակից որոշ հանրային լիազորությունների փոխանցում տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ստեղծված իրավիճակում լուրջ անհրաժեշտություն է առաջացել համայնքների խոշորացման միջոցով օպտիմալացնել ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգը՝ որպես ուղենիշ ունենալով համանման ոլորտում Եվրախորհրդի անդամ երկրների վերջին տարիների զարգացումները և Հայաստանի յուրահատկությունները:

Ակնհայտ է, որ խոշորացման ցանկացած մոդելի կիրակման արդյունքում ունենալու ենք այդ մոդելին յուրահատուկ բարեփոխումների ծավալներ և ուղղություններ: Որոշ դեպքերում, այդ բարեփոխումները ազդելու են նաև գոյություն ունեցող մարզային կառույցների (մարզպետարանների) քանակի, կառուցվածքի, լիազորությունների և նրանց գործունեության բովանդակության վրա:

2. Համայնքների խոշորացումը

Սույն ուսումնասիրության շրջանակներում, որպես Հայաստանում վարչատարածքային բաժանման օպտիմալացման արդիական գործիք, դիտարկելով համայնքների խոշորացումը, առաջարկվում է խոշորացման երկու սցենար:

2.1. Խոշորացում ըստ համայնքների փնջերի (սցենար 1)

Այս տարբերակի համար հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ին ընդունած «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը¹: Հայեցակարգային դրույթների շարքում կարևորագույն նշանակություն ունեն համայնքների խոշորացման սկզբունքները և չափորոշիչները, որոնք լուրջ նախապայման են խոշորացման միավորի (փնջի կամ սխեմայի) ձևավորման ժամանակ սուբյեկտիվ մոտեցումներից խուսափելու և խոշորացման գործընթացը առավել կառավարելի կազմակերպելու համար:

Որպես համայնքների խոշորացման կարևոր սկզբունքներ, հայեցակարգում ներառված են՝ տնտեսական նպատակահարմարությունը, բնակչությանը ծառայություններ մատուցելու հնարավորության ապահովումը, բնակչության համար հանրային ծառայություններից օգտվելու հասանելիությունը, ՏԻՄ-երի ինքնուրույնության ապահովումը և այլն: Որպես խոշորացման չափորոշիչներ, հայեցակարգում ներառված են այն հիմնական պայմաններն ու ցուցանիշները, որոնց պետք է բավարարեն համայնքները՝ կոնկրետ փնջում ընդգրկվելու համար:

Համաձայն հայեցակարգում առկա սկզբունքների և չափորոշիչների, փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում, կազմվել են ՀՀ 4 մարզերում համայնքների խոշորացման սխեմաներ²: Ըստ այդ ուսումնասիրությունների, խոշորացումից հետո ներքոհիշյալ մարզերում ակնկալվում է խոշորացման հետևյալ պատկերը:

Մարզ	Համայնքների քանակը մինչև խոշորացումը	Համայնքների քանակը խոշորացումից հետո
Վայոց Ձոր	44	8
Սյունիք ³	109	18
Արարատ	97	25
Կոտայք	67	20
Արագածոտն	114	35

Ընդհանրացնելով ուսումնասիրությունների արդյունքները կարելի է եզրակացնել, որ համայնքների խոշորացման այս տարբերակի կիրառման դեպքում Հայաստանում կունենանք մոտավորապես⁴ 235 համայնքներ:

¹ http://www.mta.gov.am/u_files/file/Hayecakarger/qax44-18_1.pdf

² Ուսումնասիրությունները կատարվել է Գերմանական տեխնիկական համագործակցության (GIZ) կազմակերպության փորձագետների կողմից:

³ Սյունիքի մարզի համայնքների խոշորացման սխեմայում Մեղրու տարածաշրջանում նախատեսվում է ձևավորել 1 համայնք:

2.2. Խոշորացում ըստ նախկին⁵ շրջանների տարածքների (սցենար 2)

Խոշորացման այս սցենարի դեպքում նախատեսվում է ունենալ՝

- 1 քաղաքային բնակավայրում որոշ բնակչության թվաքանակից ավել բնակչություն ունեցող **ինքնուրույն համայնքներ**,
- **շրջանային համայնքներ**, որոնք ներառում են նախկին խորհրդային վարչական շրջանի տարածքում գտնվող բոլոր բնակավայրերը: Այն դեպքում, երբ նախկին շրջանի բնակավայրերի բնակչության թվաքանակը մեծ է սահմանված առավելագույն չափից, շրջանի տարածքում ներառված որոշ բնակավայրեր կարող են ձևավորել նոր համայնք:
- **գարգացման մեծ ներուժ ունեցող համայնքներ՝** Ջերմուկ, Դիլիջան, և Ծաղկաձոր տուրիստական կենտրոնները իրենց հարակից բնակավայրերով:

Խոշորացման այս սցենարի համար կարող են լինել մի քանի տարբերակներ (դրսևորումներ) :⁶

Տարբերակներ		Համայնքների կազմը
<i>Առաջին</i>	1+2+37	Որտեղ՝ 1-ը Երևանն է, 2-ը՝ Գյումրին և Վանաձորը, 37-ը՝ նախկին խորհրդային շրջանները
<i>Երկրորդ</i>	1+4+37	Որտեղ՝ 1-ը Երևանն է, 4-ը՝ Գյումրին, Վանաձորը, Հրազդանը և Էջմիածինը, 37-ը՝ նախկին խորհրդային շրջանները
<i>Երրորդ</i>	1+4+37+3	Որտեղ՝ 1-ը Երևանն է, 4-ը՝ Գյումրին, Վանաձորը, Հրազդանը, Էջմիածինը, 37-ը՝ նախկին խորհրդային շրջանները, և 3-ը՝ Ջերմուկը, Դիլիջանը և Ծաղկաձորը
<i>Չորրորդ</i>	1+4+37+3+6	Որտեղ՝ 1-ը Երևանն է, 4-ը՝ Գյումրին, Վանաձորը, Հրազդանը, Էջմիածինը, 37-ը՝ նախկին խորհրդային շրջանները, 3-ը՝ Ջերմուկը, Դիլիջանը, Ծաղկաձորը, և 6-ը՝ համայնքներ որոնք ձևավորվում են նախկին խորհրդային շրջանների կիսման արդյունքում

Տարբերակները կազմվել են հետևյալ տրամաբանությամբ:

Ինքնուրույն համայնքներ

Երևանը բոլոր տարբերակներում դիտարկվում է որպես հատուկ կարգավիճակ ունեցող ինքնուրույն համայնք:

Առաջին տարբերակի դեպքում, ինքնուրույն համայնքների համար բնակչության նվազագույն թվաքանակի շեմ է առաջարկվում սահմանել 100 հազ. բնակիչը: Մնացած տարբերակների դեպքում բնակչության թվաքանակի նվազագույն շեմն առաջարկվում է սահմանել՝ 50 հազ. բնակիչը:

⁴ Նշված 5 մարզերում գոյություն ունեցող 431 համայնքների փոխարեն առաջարկվում է ունենալ 106 -ը: Նույն մոտեցումը կիրառելով ամբողջ Հայաստանի համար, խոշորացման արդյունքում մոտավոր հաշվարկներով կունենանք 235 համայնք (հավելված 8):

⁵ Մինչև 1995-թ. գոյություն ունեցած խորհրդային Հայաստանի վարչական 37 շրջաններ:

⁶ Բացի ներկայացվածից կարող են լինել նաև այլ տարբերակներ. Օր.՝ (1+2+37+3, 1+2+37+...)

	Առաջին տարբերակ	Մնացած տարբերակներ		
	Համայնքներ	Համայնքներ	Մարզ	Բնակչություն (մարդ)
1	Երևան	Երևան	-	1,127,293
2	Գյումրի	Գյումրի	Շիրակ	145,929
3	Վանաձոր	Վանաձոր	Լոռի	104,921
4	-	Էջմիածին	Արմավիր	57,753
5	-	Հրազդան	Կոտայք	53,683

Շրջանային համայնքներ

Առաջին և երկրորդ տարբերակների դեպքում շրջանային համայնքները նախատեսվում է ձևավորել բացառապես նախկին խորհրդային վարչական շրջանների տարածքով: Երրորդ տարբերակում առաջարկվում է՝ շրջանային համայնքները ձևավորել նախկին խորհրդային վարչական շրջանների տարածքով, անջատելով նրանցից զարգացման մեծ ներուժ ունեցող համայնքները, որպես առանձին համայնքներ: Չորրորդ տարբերակի դեպքում, բացի զարգացման մեծ ներուժ ունեցող համայնքներից, առաջարկվում է նոր համայնքներ ձևավորել նաև 75 հազ. բնակչից ավել բնակչություն ունեցող նախկին խորհրդային վարչական շրջանների տարածքներում:

Շրջանային համայնքները առաջին և երկրորդ տարբերակների դեպքում

	Համայնք	Մարզ	Բնակչություն (մարդ)
1	Մեղրի	Սյունիք (4)	12,123
2	Սյունիք		61,330
3	Գորիս		45,302
4	Սիսիան		34,327
5	Եղեգնաձոր	Վայոց Ձոր (2)	38,885
6	Վայք		19,708
7	Վեդի	Արարատ (5)	102,207
8	Արտաշատ		105,876
9	Մասիս		79,040
10	Թումանյան	Լոռի (5)	16,414
11	Գուգարք		28,305
12	Սպիտակ		15,303
13	Ստեփանավան		16,171
14	Տաշիր		8,685
15	Աշոցք	Շիրակ (4)	10,288
16	Ամասիա		8,004
17	Ախուրյան		49,379
18	Անի		23,520
19	Արթիկ		54,082

	Համայնք	Մարզ	Բնակչություն (մարդ)
20	Գավառ	Գեղարքունիք (6)	61,591
21	Սևան		43,856
22	Ճամբարակ		16,180
23	Վարդենիս		41,593
24	Մարտունի	Տավուշ (3)	91,680
25	Իջևան		70,614
26	Տավուշ		30,346
27	Նոյեմբերյան	Արագածոտն (4)	31,056
28	Թալին		38,380
29	Աշտարակ		75,154
30	Ապարան	Կոտայք (5)	25,044
31	Արագած		16,367
32	Չարենցավան		41,857
33	Կոտայք		115,157
34	Նաիրի	Արմավիր (5)	64,136
35	Բաղրամյան		22,917
36	Արմավիր		132,997
37	Վաղարշապատ		96,070

Շրջանային համայնքները երրորդ տարբերակի դեպքում

	Համայնք	Մարզ	Բնակչու- թյուն (մարդ)
1	Մեղրի	Սյունիք (4)	12,123
2	Սյունիք		61,330
3	Գորիս		45,302
4	Սիսիան		34,327
5	Եղեգնաձոր	Վայոց Ձոր (3)	38,885
6	Վայք		12,513
7	Ջերմուկ		7,195
8	Վեդի	Արարատ (5)	102,207
9	Արտաշատ		105,876
10	Մասիս		79,040
11	Թումանյան	Լոռի (5)	16,414
12	Գուգարք		28,305
13	Սպիտակ		15,303
14	Ստեփանավան		16,171
15	Տաշիր		8,685
16	Աշոցք	Շիրակ (4)	10,288
17	Ամասիա		8,004
18	Ախուրյան		49,379
19	Անի		23,520
20	Արթիկ		54,082

	Համայնք	Մարզ	Բնակչու- թյուն (մարդ)
21	Գավառ	Գեղարքու- նիք (6)	61,591
22	Սևան		43,856
23	Ճամբարակ		16,180
24	Վարդենիս		41,593
25	Մարտունի	Տավուշ (4)	91,680
26	Իջևան		47,494
27	Դիլիջան		23,120
28	Տավուշ	Արագա- ծոտն (4)	30,346
29	Նոյեմբերյան		31,056
30	Թալին		38,380
31	Աշտարակ	Արագա- ծոտն (4)	75,154
32	Ապարան		25,044
33	Արագած		16,367
34	Չարենցավան	Կոտայք (5)	33,519
35	Ծաղկաձոր		8,338
36	Կոտայք		115,157
37	Նաիրի	Արմավիր (5)	64,136
38	Բաղրամյան		22,917
39	Արմավիր		132,997
40	Վաղարշապատ		96,070

Շրջանային համայնքները չորրորդ տարբերակի դեպքում

	Համայնք	Մարզ	Բնակչու- թյուն (մարդ)
1	Մեղրի	Սյունիք (4)	12,123
2	Սյունիք		61,330
3	Գորիս		45,302
4	Սիսիան		34,327
5	Եղեգնաձոր	Վայոց Ձոր (3)	38,885
6	Վայք		12,513
7	Ջերմուկ		7,195
8	Վեդի	Արարատ (5)	55,594
9	Արարատ		46,613
10	Արտաշատ		72,390
11	Մասիս		63,941
12	Այնթափ		38,357
13	Թումանյան	Լոռի (5)	16,414
14	Գուգարք		28,305

	Համայնք	Մարզ	Բնակչու- թյուն (մարդ)
23	Գավառ	Գեղարքու- նիք (6)	61,591
24	Սևան		43,856
25	Ճամբարակ		16,180
26	Վարդենիս		41,593
27	Մարտունի	Տավուշ (4)	62,433
28	Վարդենիկ		29,427
29	Իջևան		47,494
30	Դիլիջան	Տավուշ (4)	23,120
31	Տավուշ		30,346
32	Նոյեմբերյան		31,056
33	Թալին	Արագա- ծոտն (4)	38,380
34	Աշտարակ		75,154
35	Ապարան		25,044
36	Արագած		16,367

15	Սպիտակ		15,303	37	Չարենցավան		33,519
16	Ստեփանավան		16,171	38	Ծաղկաձոր	Կոտայք (5)	8,338
17	Տաշիր		8,685	39	Կոտայք		46,024
18	Աշոցք	Շիրակ (4)	10,288	40	Աբովյան		69,133
19	Ամասիա		8,004	41	Նաիրի	64,136	
20	Ախուրյան		49,379	42	Բաղրամյան	22,917	
21	Անի		23,520	43	Արմավիր	72,350	
22	Արթիկ		54,082	44	Մեծամոր	60,647	
					45	Վաղարշապատ	55,137
				46	Մուսալեռ	40,933	

Քանի որ վերը ներկայացված տարբերակներից չորրորդն իր մեջ ներառում է մնացած տարբերակներում առկա բոլոր դրսևորումները, այսինքն՝ այն առավել ընդհանրական է, և ներառում է շատ թվով համայնքներ, սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացվող հետագա հաշվարկներում այդ տարբերակը (1+4+37+3+6) դիտարկվելու է որպես հիմնական (հաշվարկային): Չորրորդ տարբերակով խոշորացված ինքնուրույն և շրջանային համայնքների սխեմաները բերված է **հավելված 1 -ում**:

3. Համայնքների խոշորացման սահմանադրական և այլ իրավական հիմքերը

Համայնքների խոշորացման ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունում իրավական դաշտը կանոնակարգվում է՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» համապատասխան դրույթների հիման վրա:

Հատված ՀՀ Սահմանադրությունից

Հոդված 104.1. Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրությունն է:

Հոդված 110. Համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են օրենքով միացվել միմյանց կամ առանձնացվել: Ազգային ժողովը համապատասխան օրենքն ընդունում է կառավարության առաջարկով: Մինչև օրենսդրական նախաձեռնության ներկայացումը կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ: Տեղական հանրաքվեների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքից:

Համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները սահմանվում են օրենքով:

Հատված «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայից»

Հոդված 5. Տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանազատումների պահպանումը

Տեղական տարածքային սահմանազատումների ցանկացած փոփոխության դեպքում անհրաժեշտ է նախապես խորհրդակցել տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինների հետ, հավանաբար այնտեղ, որտեղ թույլ է տալիս օրենքը, հանրաքվե անցկացնելու միջոցով:

Այս երկու փաստաթղթերը համայնքների խոշորացման մասով պարունակում են նույնատիպ դրույթներ, որոնցում առկա են հետևյալ շեշտադրումները.

- համայնքների խոշորացում իրականացնելուց առաջ, անհրաժեշտ է պարզել այդ ուղղությամբ խոշորացվող համայնքների բնակչության կարծիքը, համայնքներում տեղական հանրաքվե անցկացնելու միջոցով,
- խոշորացման հետ կապված, տեղական հանրաքվեի բացասական արդյունքները չեն կարող արգելք հանդիսանալ համայնքների խոշորացման համար,
- համայնքների խոշորացման մասով օրենքի նախագիծը («Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի փոփոխություններ) Ազգային ժողով է ներկայացնում միայն կառավարությունը,
- համայնքների խոշորացման սկզբունքները, կարգը և նոր ձևավորված համայնքներում ընտրությունների անցկացման ժամկետները սահմանվում են օրենքով⁷:

Վերը շարադրվածը հիմնավորում է համայնքների խոշորացման հնարավորությունը և միաժամանակ՝ պահանջում որոշակի պարտադիր գործընթացներ:

4. Լիազորությունների ապակենտրոնացումը

Տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների ծավալը, որն արտահայտում է տվյալ երկրի ապակենտրոնացման աստիճանը, այլ գործոններից⁸ բացի, մեծապես կախված է այդ համակարգը ձևավորող համայնքների ունակություններից և կարողություններից: Ինչպես արդեն վերը նշվեց, Հայաստանում ապակենտրոնացման (հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունից ելնելով լիազորությունների վերապահումն է ՏԻՄ-ին, որոնք մինչ այդ վերապահված էին հանրապետական գործադիր և տարածքային կառավարման մարմիններին) ցածր մակարդակի հիմնական պատճառներից մեկը գործող վարչատարածքային համակարգի արդյունքում ձևավորված, բազմաթիվ փոքր համայնքների առկայությունն է: Այդ համայնքների խոշորացման մոդելի (տարբերակի) ընտրությունն ուղղակի ազդեցություն ունի նոր ձևավորվող համայնքների կարողությունների ձևավորման վրա, հետևաբար՝ խոշորացման սցենարից է կախված համայնքներին փոխանցվող նոր լիազորությունների ցանկը և ծավալը:

Լիազորությունների ապակենտրոնացման մակարդակը ուսումնասիրվող երկու խոշորացման սցենարների համար խիստ տարբեր է:

Ապակենտրոնացումը սցենար 1-ի դեպքում

Այս սցենարի դեպքում, նոր ձևավորված համայնքները նախկինների համեմատ կունենան ավելի մեծ ունակություններ և միջոցներ, որը հնարավորություն կստեղծի զգալիորեն ընդլայնել մատուցվող ծառայությունների քանակն ու աշխարհագրությունը,

⁷ Նման օրենք դեռևս չկա: Համայնքների խոշորացման սկզբունքները, կարգը և նոր ձևավորված համայնքներում ընտրությունների անցկացման ժամկետները կարող են սահմանվել առանձին օրենքով կամ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի մաս կազմել:

⁸ Գործոնները կարող են լինել քաղաքական, աշխարհագրական, տնտեսական, ժողովրդագրական և այլն:

և հասնել նրան, որ իրականացվի ներկա պահին օրենքով ամրագրված պարտադիր լիազորությունների ամբողջ (հիմնական) ծավալը, ինչը նախկինում չէր կատարվում: Ակնհայտ է, որ նոր ձևավորված համայնքներից շատերը, միննույն է, չեն կարող կրել այնպիսի լուրջ լիազորություններ, որոնք կապահովեն ապակենտրոնացման ցանկալի արդյունք: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ նոր՝ ապակենտրոնացման ենթակա, լիազորություններից շատերի իրականացման համար, գոյություն ունեցող ենթակառուցվածքները և սպասարկման տիրույթները ընդգրկում են շատ ավելի մեծ տարածքներ, քան համայնքների խոշորացման այս սցենարով ձևավորված համայնքների փնջի տարածքն է:

Այսինքն, համայնքների խոշորացման 1-ին սցենարը ավելի շատ նպաստելու է ՏԻՄ-երի գոյություն ունեցող լիազորություններն ամբողջ ծավալով, անհրաժեշտ ցանկով և պահանջվող որակով իրականացնելուն և ավելի քիչ է ուղղված համայնքներին նոր լիազորություններ փոխանցելուն, կամ որ նույնն է՝ ապակենտրոնացմանը:

Ապակենտրոնացումը սցենար 2-ի դեպքում

Լիազորությունների մասով այս սցենարը լուրջ հնարավորություն է ստեղծում այս պահին օրենքով ամրագրված՝ համայնքային բոլոր պարտադիր լիազորությունների ամբողջական իրականացման համար:

Այս սցենարի պայմաններում, համայնքներին կփոխանցվեն նաև նոր լիազորություններ, ինչը ենթադրվում է, որ համայնքների կառավարմանը պետք է փոխանցել նաև այդ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները: Հանրային ծառայությունների մեծ մասը (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և այլն), որոնք ներկայումս մատուցվում են մարզպետարանների (նրանց ենթակա կառույցների) և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների կողմից, իրենց սպասարկման տիրույթով հիմնականում համընկնում են սցենար 2-ի շրջանակներում ձևավորվող համայնքների վարչական տարածքների հետ, ինչի պատճառով այդ ծառայությունների փոխանցումը համայնքային մակարդակ հնարավոր է դառնալու իրականացնել առանց լուրջ խնդիրների և ցնցումների:

Ապակենտրոնացվող լիազորությունները համայնքներին փոխանցվելու են հիմնականում որպես պատվիրակված լիազորություններ, ինչից հետևում է, որ փոխանցվելու են նաև այդ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Արդյունքում, համայնքներն իրենց կառավարման ներքո ունենալու են լուրջ ենթակառուցվածքային, նյութական և ֆինանսական միջոցներ (ռեսուրսներ), ինչը հնարավորություն է ստեղծելու որակյալ կադրերի ներգրավումը համայնքային մակարդակում, մասնավորապես՝ համայնքային ծառայության պաշտոններում:

Այս բոլորը միասին հուսալի նախապայման են ապահովելու կառավարման արդյունավետության մեծացման, ծառայությունների որակի բարձրացման և մատչելիության ընդլայնման համար:

Այսինքն, համայնքների խոշորացման այս սցենարը ոչ միայն ապահովում է հնարավորություններ այս պահին համայնքներին ամրագրված ծառայություններն

ամբողջ ծավալով և ցանկով իրականացնելու համար, այլև ռեալ նախապայման է լիազորությունների հետագա շարունակական ապակենտրոնացման համար:

Հանրային լիազորությունների բաշխումը համայնքային մակարդակում, վերը նշված երկու սցենարների դեպքում, բերված է **հավելված 2 –ում**:

5. Համայնքների խոշորացման տնտեսական արդյունավետությունը

Խոշորացման արդյունքում նոր ձևավորված համայնքների գործունեությունը, որպես տեղական ինքնակառավարման համակարգը ձևավորող սուբյեկտներ, որոշակիորեն տարբերվելու է մինչ խոշորացումն ունեցած իրենց գործունեությունից: Այդ տարբերության պատճառներից հիմնականները պայմանավորված են լինելու համայնքների բազմաբնակավայրային կառուցվածքով, ինչպես նաև խոշորացման սցենարից կախված՝ ՏԻՄ-երին փոխանցված նոր լիազորություններով և գործառույթներով:

Ակնհայտ է, որ խոշորացման արդյունքում (հատկապես սցենար 2-ի դեպքում) նոր ձևավորված համայնքները (յուրաքաչյուր համայնք) իրենց տրամադրության տակ ունենալու են զգալի ֆինանսական միջոցներ, որոնք համայնքներին հնարավորություն են տալու իրականացնել լուրջ ծախսատար ծրագրեր: Ստեղծված իրավիճակում համայնքները, կապիտալ ներդրումների (սուբվենցիաների) իրականացման ուղղությամբ, ոչ միայն կարող են հանդես գալ որպես կառավարության գործընկեր՝ ծրագրերի համաֆինանսավորման համար, այլև ինքնուրույն ներգրավել փոխառու միջոցներ առևտրային բանկերից և այլ վարկային կազմակերպություններից: Այս իմաստով հնարավոր են դառնում նաև համայնքային արժեթղթերի թողարկման կիրարկումը, ինչը միջազգային պրակտիկայում համայնքային կապիտալ ծրագրերի ֆինանսավորման լուրջ աղբյուր է:

Գնահատենք խոշորացման (ապակենտրոնացման) արդյունքում ակնկալվող տնտեսական օգուտները՝ նախապես գիտակցելով, որ համայնքների կողմից իրականացվող «նախկին» և «նոր փոխանցված» լիազորությունները կարող են առաջացնել ինչպես նոր ծախսեր, այպես էլ նպաստել որոշակի օգուտների (տնտեսումների) գոյացմանը:

Դիտարկենք հնարավոր «նոր» ծախսերի գոյացման հիմքերը:

ա) Ապակենտրոնացման արդյունքում համայնքներին փոխանցված նոր լիազորությունների իրականացման ծախսեր (սցենար 2):

Թեպետ համայնքների համար այս ծախսերը նոր են, այնուամենայնիվ, ընդհանուր պետության առումով, դրանք արդեն իսկ կատարվող ծախսեր են, որոնք կառավարման մի մակարդակից ուղղակիորեն տեղափոխվելու են մյուս մակարդակ: Ավելին՝ ապակենտրոնացվող ծախսատար լիազորությունները միայն պատվիրակված են, հետևաբար՝ նրանք համայնքի սեփական միջոցների վրա ծանրաբեռնվածություն չեն կարող առաջացնել, այլ ֆինանսավորվելու են բացառապես պետական բյուջեից:

բ) Պարտադիր լիազորությունների շրջանակում իրականացվող, համայնքային «նախկին» ծառայությունների ծավալների աճի, աշխարհագրության ընդլայնման և որակի բարելավման հետ կապված ծախսեր:

Նշված ծառայությունների զգալի մասը (ջրամատակարարում, աղբահանություն, ներհամայնքային տրանսպորտ և այլն) իրենց բնույթով ինքնաձախաձածակվող են և դրանց համար պետք է վճարեն ծառայություններ ստացողները: Ճիշտ է, ներկայումս կան շատ համայնքներ, որտեղ նշված ծառայությունների դիմաց վճարներ չեն գանձվում (կամ գանձվում են մասնակի), ինչի պատճառով այդ ծառայությունների կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերը կատարվում են համայնքի բյուջեից: Մակայն, ակնհայտ է, որ իրավիճակը աստիճանաբար շտկման կարիք ունի, իսկ համայնքների խոշորացման պարագայում դա կարող է ավելի արագ կարգավորվել: Այսինքն, բոլոր դեպքերում, համայնքային բյուջեից այս ծառայությունների իրականացման մասով լրացուցիչ ծախսեր չեն ակնկալվում:

Մնացած ծառայությունների գծով՝ ընդլայնման և որակի բարձրացման հետ կապված հարցերը լուծվելու են համապատասխան ֆինանսական միջոցների գոյացմանը զուգահեռ, որոնք տնտեսվելու են խոշորացման արդյունքում՝ արդյունավետ կառավարման, մասշտաբի էֆեկտի, ենթակառուցվածքների օպտիմալ տեղաբաշխման և այլ ազդեցությունների հետևանքով (տե՛ս ստորև թվարկված, խոշորացման օգուտների «բ» ենթակետը):

Վերը շարադրվածից հետևում է, որ նոր ձևավորված համայնքներում, ապակենտրոնացման հետևանքով **լրացուցիչ ծախսեր չեն առաջանում:**

Դիտարկենք այն գործոնները, որոնք համայնքների խոշորացման արդյունքում բերելու են օգուտներ (տնտեսումներ):

ա) Վարչական ապարատի (աշխատակազմի) օպտիմալացումից և պահպանման ծախսերի⁹ կրճատումից առաջացող օգուտներ:

Համայնքների խոշորացման տնտեսական օգուտներն առաջին հերթին արտահայտվում են վարչական ծախսերի մեջ աշխատակազմի և նրա պահպանման ծախսերի կրճատմամբ: Պարզ է, որ նոր ձևավորված համայնքի աշխատակազմը չի կարող իր մեջ ներառել նախկին համայնքների աշխատակազմերն ամբողջությամբ¹⁰, այլ որոշակի փոփոխություններ կկրի:

Գործնականում, բավականին դժվար է հաշվարկել, թե կոնկրետ քանի միավոր հաստիք կկրճատվի և որքան գումար կազատվի համայնքների խոշորացման արդյունքում, քանի որ չկան համայնքի աշխատակազմի թվի վերաբերյալ սահմանված

⁹ Այս ծախսերն՝ ըստ բյուջեների գործառնական դասակարգման, դասվում են «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» խմբին:

¹⁰ Ակնհայտ է, որ համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորվող համայնքում չեն կարող լինել մեկից ավելի համայնքի ղեկավարներ, աշխատակազմի քարտուղարներ և այլն: Ուստի, անհրաժեշտություն է առաջանալու նոր ձևավորված համայնքների հաստիքացուցակները վերանայելու և կրճատելու:

նորմատիվներ: Իհարկե, կան պաշտոններ, որոնց մասին միանշանակ կարելի է ասել, որ նոր ձևավորված մեկ համայնքում դրանք չեն կարող լինել մի քանի հատ: Սակայն, երբ խոսքը գնում է կոնկրետ մասնագետներին, շատ դժվար է ենթադրել, թե նրանցից քանիսը կկրճատվեն: Ավելին, նոր ձևավորված համայնքում, աշխատակազմի կրճատման արդյունքում տնտեսված գումարների հաշվին նոր ծառայությունների մատուցումը կարող է ենթադրել նաև նոր աշխատողների ներգրավում:

Այնուամենայնիվ, հաշվարկենք համայնքների խոշորացման արդյունքում «ա» գործոնով պայմանավորված օգուտները, ըստ խոշորացման երկու սցենարների առանձին-առանձին:

Օգուտների հաշվարկաման համար օգտագործվել է **հավելված 3 կետ 2 -ում** ներկայացված մեթոդաբանությունը, որը մեկ խոշորացվող համայնքի կտրվածքով ներառում է հետևյալ քայլերը՝

- I քայլ. հաշվարկվել է բոլոր խոշորացվող նախկին համայնքների աշխատակազմերի պահպանման ծախսերի հանրագումարը (կրճատման ենթակա ծախսերը):
- II քայլ. կազմվել է նոր ձևավորված համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերի նախահաշիվը¹¹, ներառելով խոշորացվող նախկին համայնքներում (բացի կենտրոն համայնքից) վարչական ներկայացուցիչների պահպանման ծախսերը (ավելացման ենթակա ծախսեր):
- III քայլ. այս երկու ծախսերի տարբերությունը դիտարկվել է որպես օգուտներ:

Խոշորացման երկու սցենարներից յուրաքանչյուրի կիրառման արդյունքում, «ա» գործոնով պայմանավորված օգուտների հաշվարկները բերված են՝ սցենար 1-ի համար **հավելված 4-ում**, սցենար 2-ի համար **հավելված 5-ում**:

Համաձայն այդ հաշվարկների, յուրաքանչյուր սցենարի դեպքում ակնկալվող օգուտները կլինեն՝

Սցենարներ	Համայնքների թիվը խոշորացումից հետո ⁽¹²⁾	Մեկ համայնքից սպասվող օգուտները (հազ.դրամ)	Ընդհանուր օգուտները (մլն.դրամ)
Սցենար 1	235	45.123	10.604
Սցենար 2	46	301.613	13.874

- բ) Կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, մասշտաբի էֆեկտի, համայնքային ենթակառուցվածքների օպտիմալ տեղաբաշխման, (ծառայությունների ինքնարժեքի նվազեցման) և այլ հետևանքներով պայմանավորված օգուտներ:

Համայնքային ծախսերի տնտեսման վրա «բ» գործոնի ազդեցության կանխատեսումն ու հաշվարկելը կապված է որոշակի բարդությունների հետ: Դրանք, ի

¹¹ Որպես հիմք ընդունվում է «Համայնքի ծախսային քաղաքականության մեթոդաբանությամբ» (www.mta.gov.am) նույնատիպ համայնքի ծախսերում ապարատի պահպանման ծախսերի նախահաշիվը:
¹² Սցենար 1 –ի դեպքում ունենալու ենք մոտավորապես 235 խոշորացված համայնք, իսկ սցենար 2-ի չորրորդ տարբերակի դեպքում ունենալու են խոշորացված 46 (50 – 4) համայնք:

տարբերություն «ա» գործոնով նախատեսվող տնտեսումների, միանգամից չեն գոյանում, այլ ստեղծվելու են աստիճանաբար և յուրաքանչյուր խոշորացման դեպքի համար կարող են ունենալ տարբեր կառուցվածք ու տարբեր արժեք:

Տրամաբանությունը հուշում է, որ «բ» գործոնով ակնկալվող տնտեսումները հիմնականում ուղղվելու են հենց այդ տնտեսումները առաջացնող ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը ու դրանց ծավալների և աշխարհագրության ընդլայնմանը, չբացառելով, որ որոշ դեպքերում դրանք կարող են նաև համայնքային նոր ծրագրերի ֆինանսավորման աղբյուր հանդիսանալ:

Դիտարկենք «բ» գործոնի բաղադրիչները

Կառավարման արդյունավետության բարձրացում

Համայնքների խոշորացումը նպաստելու է կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես դա արտահայտվելու է տեղերում կադրային ապահովվածության և աշխատատեղերի կահավորման¹³ վրա: Արդյունավետ կառավարման վրա կարող է դրական ազդեցություն ունենալ նաև ներքին և արտաքին վերահսկողության մեխանիզմների զարգացումը, որը մեծապես կապված է լինելու ավագանու ինստիտուտի զարգացման և պետության կողմից պատվիրակված լիազորությունների նկատմամբ մասնագիտական հասցեական վերահսկողություն ապահովելու հետ:

Ինչքան մեծ են խոշորացման ծավալները, այնքան ավելի տեսանելի են կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման հեռանկարները: Այս իմաստով կիրարկման համար առավել նախընտրելի է դառնում խոշորացման երկրորդ (շրջանային) սցենարը:

Մասշտաբի էֆեկտ

Ինչքան մեծանում են ծառայությունների մատուցման ծավալները, այնքան փոքրանում է միավոր ծառայության մատուցման ինքնարժեքը: Այս դրույթը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել «մասշտաբի էֆեկտ», որը համայնքների խոշորացման տարբերակում նշանակում է՝ ինչքան մեծ են համայնքները, այնքան էժան կարող են լինել համայնքի կողմից մատուցվող ծառայությունները: Հատկանշական է, որ յուրաքանչյուր ծառայություն ունի իր սպասարկման օպտիմալ տիրույթը, որոնք այս դեպքի համար, համայնքային ծառայությունների մասով, լավագույնս ընդգրկվում են խոշորացման երկրորդ սցենարի սահմաններում:

Համայնքային ենթակառուցվածքների օպտիմալ տեղաբաշխում

Հայաստանում համայնքային ենթակառուցվածքների հիմնական մասը կառուցված է սովետական ժամանակներում և հարմարեցված է այն ժամանակվա

¹³ Գույք, սարքավորումներ, համակարգչային ծրագրեր, ինտերնետ կապ և այլն:

վարչատարածքային բաժանման տրամաբանությամբ¹⁴: Առկա վարչատարածքային բաժանումը, ինչպես նաև վերջին տարիների բնակչության ներքին և արտաքին միգրացիան, լուրջ անհրաժեշտություն են ստեղծել վերանայել համայնքներում առկա ենթակառուցվածքների տեղակայման նպատակահարմարությունը և իրականացնել նրանց օպտիմալ տեղաբաշխում: Օպտիմալ տեղաբաշխում ասելով պետք է հասկանալ հանրային ծառայություններ մատուցող ենթակառուցվածքների, աշխարհագրական իմաստով, այնպիսի տեղակայում, որը հնարավորություն կտար առավելագույնս ապահովել ծառայությունների մատուցման հասանելիությունն ու մատչելիությունը՝ միաժամանակ ապահովելով այդ ծառայությունների իրականացման համար կատարված ծախսերի արդյունավետությունն ու նպատակայնությունը: Սա նշանակում է, որ ենթակառուցվածքների օպտիմալ տեղակայման վրա ազդելու են բազմաթիվ գործոններ, մասնավորապես՝ ծառայություն մատուցող ենթակառուցվածքի հզորությունը, ծանրաբեռնվածությունը, սպասարկվող տարածքը, հեռավորությունը և տրանսպորտային մատչելիությունը, ծառայությունից օգտվողների քանակը, ծառայության ինքնարժեքը (մեկ շահառուի հաշվարկով) և այլն:

Այս գործողությունը, հատկապես խոշորացման երկրորդ սցենարի դեպքում, որը առավել մոտ է նախկին վարչատարածքային բաժանմանը, ոչ միայն կնպաստի վերը ծառայությունների մատուցման մատչելիության և հասանելիության բարձրացմանը, այլև կստեղծի որոշ տնտեսական էֆեկտ:

Հարկ է նշել, որ վարչատարածքային բարեփոխումների ավարտից հետո, մեկ տարվա ընթացքում, անհրաժեշտություն է առաջանալու նաև գույքագրել հանրապետական գործադիր մարմինների համայնքներում տեղակայված ենթակառուցվածքները, դրանց վիճակի, առկայության նպատակահարմարության և հետագա օգտագործման նկարագրությամբ, որը հնարավորություն կտա կազմել նաև այդ ենթակառուցվածքների օպտիմալ տեղաբաշխման սխեման /օրինակ՝ դպրոցներ, միջին-մասնագիտական կրթօջախներ, առողջապահական հիմնարկներ, այլ սոցիալական ենթակառուցվածքներ, ԶԱԳՄ-եր, ԳԱՄԿ-եր, արտակարգ իրավիճակների արձագանքման ենթակառուցվածքներ, անասնաբուժական ծառայություններ և այլն/:

Ծառայությունների ինքնարժեքի վրա, բացի վերը նշվածներից, ազդում են նաև այլ գործոններ, մասնավորապես՝ ինքնարժեքի նվազեցման պատճառ կարող են հանդիսանալ ծառայությունների մատուցումն ապահովող ենթակառուցվածքների ուղղությամբ իրականացված կապիտալ ներդրումային ծրագրերը (հիմնական միջոցների կապիտալ նորոգումը կամ նորերի ձեռքբերումը և այլն):

Համայնքային ծախսերի կազմում կապիտալ ծախսերը դիտարկվում են որպես համայնքի զարգացմանն ուղղված կարևորագույն բաղադրիչ: Ընդհանուր ծախսերի մեջ այդ ծախսերի բաժնեմասը համայնքի ՏԻՄ-երի իրականացված քաղաքականության արդյունք է: Այս իմաստով, հետաքրքիր կլինի, խոշորացման յուրաքանչյուր սցենարի համար, դիտարկել խոշորացված համայնքի բյուջեի կառուցվածքը, այն համեմատելով նրա կազմի մեջ մտնող նախկին համայնքների նույնանման ցուցանիշների հետ:

¹⁴ Կրթական և առողջապահական հիմնարկներ, ճանապարհներ, ջրամատակարարման և ոռոգման համակարգեր և այլն:

Հի	Ֆինանսական ցուցանիշը	Խոշորացված համայնք		Նախկին համայնքների միջինացված ցուցանիշ	
		Սցենար 1	Սցենար 2	Սցենար 1	Սցենար 2
	Խոշորացման սցենարներ				
1	Վարչական բյուջեի ծախսերի բաժնեմասը ընդհանուր ծախսեր մեջ (%)	69,3	45,2	92,5	64,1
2	այդ թվում՝ Աշխատակազմի պահպանման ծախսերի բաժնեմասը ընդհանուր ծախսերի մեջ (%)	24,4	10,3	49,3	25,7
3	Ֆոնդային (կապիտալ) ծախսերի բաժնեմասը ընդհանուր ծախսերի մեջ (%)	30,7	54,8	7,5	35,9

Համայնքային ծախսերի ուսումնասիրության ժամանակ, պայմանականորեն ընդունվել է, որ յուրաքանչյուր խոշորացվող համայնքին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները նույնությամբ փոխանցվում են նոր կազմավորված խոշոր համայնքին:

Համահարթեցման դոտացիաների՝ ըստ համայնքների բաշխման տրամաբանությունը՝ կախված խոշորացման սցենարից, տարբեր է: Սցենար 1-ի դեպքում, առաջարկվում է կիրական համար օգտագործել ԱԺ–ում գտնվող՝ առաջին ընթերցմամբ անցած օրենքի նախագծով նախատեսվող մեխանիզմները: Սցենար 2-ի դեպքում՝ անհրաժեշտություն է առաջանալու մշակել համահարթեցման նոր մոտեցումներ: Այդ մոտեցումները լուծում են տալու հետևյալ երկու կարևորագույն խնդիրներին՝

- Երևան քաղաքի և մնացած համայնքների միջև գոյություն ունեցող ենթակառուցվածքային, եկամտային և սեփական լիազորությունների մասով տարբերությանը,
- սահմանելու են, Երևանից բացի, մնացած համայնքների միջև համահարթեցման գումարների բաշխման այլ մեխանիզմներ, օգտագործելով նոր տրամաբանությանը համահունչ չափորոշիչներ և դասակարգիչներ:

Հաշվի առնելով, որ խոշորացման արդյունքում, համայնքներին լրացուցիչ ծախսեր պահանջող, նոր պարտադիր լիազորություններ չեն փոխանցվում, ապա այս բարեփոխման հետևանքով **պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման կարգով տրվող դոտացիաների ընդհանուր գումարի տրամադրման չափի և կարգի մեջ փոփոխություն չի լինելու**¹⁵:

Սրան զուգահեռ, համայնքային ենթակառուցվածքներին ուղղված կապիտալ ծրագրերի առավել արդյունավետ և նպատակային իրականացման համար, առաջարկվում է ստեղծել ***համայնքային զարգացման հիմնադրամ***¹⁶, որտեղ կենտրոնանալու են բոլոր շահագրգիռ կառույցների կողմից այդ ուղղությամբ

¹⁵ Սա վերաբերում է համահարթեցման սկզբունքով պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող ընդհանուր գումարի (համախմբված բյուջեի առնվազն 4 %-ի) չափին և հաշվարկման կարգին:

¹⁶ Առաջարկվում է ուղղորդվել Վրաստանի տարածքային զարգացման հիմնադրամի օրինակով:

իրականացվող ծրագրերը կամ հատկացվող միջոցները: Պետությունն այդ հիմնադրամի ձևավորման և գործունեության ուղղությամբ առաջնային դերակատարում պետք է ունենա և հանդիսանալու է հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի հիմնական ֆինանսավորողը:

6. Խոշորացված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումը

Խոշորացման ցանկացած սցենարի դեպքում, անհրաժեշտություն է առաջանալու նորովի ձևավորել նոր տեղական ինքնակառավարման մարմինները: Կախված ընտրված սցենարից՝ տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորումը կարող է լինել տարբեր կարգով:

Ինքնուրույն (մեկ բնակավայրից կազմված) **համայնքների** դեպքում, որպես ՏԻՄ – երի ձևավորման մոդել առաջարկվում են հետևյալ տարբերակները.

- համայնքի ավագանին (խորհուրդը) ընտրվում է համամասնական սկզբունքով, իսկ համայնքի ղեկավարը՝ ուղղակի (մեծամասնական) ընտրակարգով,
- գործում է Երևան քաղաքի ՏԻՄ –երի ընտրական մոդելը:

Ինքնուրույն համայնքների ավագանու մանդատների քանակի հաշվարկները առաջարկվում է նույնացնել (միասնականություն ապահովել) շրջանային համայնքների համամասնական ընտրակարգի՝ ըստ բնակչության թվաքանակի հաշվարկվող ավագանու մանդատների հաշվարկման հետ (շրջանային համայնքների «բ» ենթակետի տարբերակ 1):

Հաշվի առնելով Երևան քաղաքում ՏԻՄ–երի ընտրական մոդելի նկատմամբ ձևավորված դրական արձագանքները, ինչպես նաև ինքնուրույն համայնքների համար մեկ միասնական մոդել ունենալու նպատակահարմարությունը, առաջարկվում է որպես հիմնական տարբերակ ընդունել Երևանի մոդելը:

Շրջանային համայնքների դեպքում, համայնքի ավագանու (խորհրդի) ընտրությունները նախատեսվում է իրականացնել խառը ընտրակարգով, հետևյալ երկու ընտրակարգերի համակցմամբ:

ա.) Մեծամասնական միամանդատ ընտրակարգ: Համայնքի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր բնակավայրից¹⁷ մեկական տեղ:

բ.) Համամասնական (կուսակցական) ընտրակարգ: Մանդատների թիվը առաջարկվում է սահմանել ներքոհիշյալ 3 տարբերակներից մեկով:

Տարբերակ 1. համայնքի բնակչության թվաքանակին համապատասխան

Համամասնական ընտրակարգով շրջանային և ինքնուրույն համայնքների համար մանդատների քանակը ըստ համայնքի բնակչության թվաքանակի

¹⁷ Կամ բնակավայրերի խմբից, որոնք ընդգրկված են եղել նախկին միևնույն տեղական խորհրդի կազմում: Այլ տարբերակով կարելի է նախատեսել, որ, որոշ բնակչության թվաքանակից (օրինակ, 100 բնակչից) պակաս բնակչություն ունեցող բնակավայրերը առանձին ընտրատարածք չեն ունենում, այլ մտնում են հարևան ընտրատարածքի մեջ (Վրաստանի գործող մոդել):

Համայնքի բնակչության թիվը (մարդ)	Ավագանու մանդատների թիվը	
	Շրջանային համայնքներ	Ինքնուրույն համայնքներ
մինչև 10000	11	-
10000-20000	13	-
20000-30000	15	-
30000-50000	21	-
50000-75000	25	Էջմիածին (57,753), Հրազդան (53,683)
75000 և ավելի	35	Գյումրի (145,929), Վանաձոր (104,921)

Տարբերակ 2. մեծամասնական միամանդատ տեղերի քանակին հավասար

Տարբերակ 3. հաստատագրված (օրինակ, 21 մանդատ)

Շրջանային համայնքներում ավագանու մանդատների քանակը

(Հաշվարկված է համամասնական ընտրակարգի տարբերակ 1-ի համար)

	Համայնք	Բնակչու- թյուն (մարդ)	Ավագանու մանդատների թիվը			
			Ընդա- մենը	Մեծամաս.		համա մաս.
				Բնակա վայր.	Գյուղ. տավեր	
1	Մեղրի	12,123	26	13	10	13
2	Սյունիք	61,330	62	37	20	25
3	Գորիս	45,302	46	25	19	21
4	Միսիան	34,327	55	34	18	21
5	Եղեգնաձոր	38,885	47	26	20	21
6	Վայք	12,513	29	16	11	13
7	Ջերմուկ	7,195	13	2	2	11
8	Վեդի	55,594	42	17	9	25
9	Արարատ	46,613	35	14	7	21
10	Արտաշատ	72,390	50	25	15	25
11	Մասիս	63,941	50	25	13	25
12	Այնթափ	38,357	37	16	11	21
13	Թումանյան	16,414	44	31	17	13
14	Գուգարք	28,305	36	21	18	15
15	Սպիտակ	15,303	34	21	12	13
16	Ստեփանավան	16,171	32	19	13	13
17	Տաշիր	8,685	31	20	14	11
18	Աշոցք	10,288	38	25	9	13
19	Ամասիա	8,004	30	19	14	11
20	Ախուրյան	49,379	54	33	19	21
21	Անի	23,520	32	17	15	15
22	Արթիկ	54,082	49	24	13	25
23	Գավառ	61,591	37	12	10	25
24	Սևան	43,856	32	11	9	21
25	Ճամբարակ	16,180	29	16	12	13
26	Վարդենիս	41,593	57	36	16	21
27	Մարտունի	62,433	37	12	12	25
28	Վարդենիկ	29,427	20	5	5	15
29	Իջևան	47,494	40	19	16	21
30	Դիլիջան	23,120	22	7	4	15
31	Տավուշ	30,346	38	17	16	21
32	Նոյեմբերյան	31,056	40	19	11	21
33	Թալին	38,380	62	41	13	21
34	Աշտարակ	75,154	65	30	14	35
35	Ապարան	25,044	36	21	12	15
36	Արագած	16,367	35	22	10	13
37	Զարենցավան	33,519	30	9	1	21
38	Ծաղկաձոր	8,338	18	7	1	11
39	Կոտայք	46,024	39	18	10	21
40	Աբովյան	69,133	39	14	8	25
41	Նաիրի	64,136	43	18	14	25
42	Բաղրամյան	22,917	30	15	6	15
43	Արմավիր	72,350	44	19	10	25
44	Մեծամոր	60,647	45	20	9	25
45	Վաղարշապատ	55,137	48	23	8	25
46	Մուսաղեռ	40,933	40	19	5	21

Շրջանային համայնքներում ավագանու մանդատների սպասվելիք քանակներն՝ ըստ համայնքների, բոլոր երեք տարբերակների համար բերված է **հավելված 6-ում**:

Շրջանային համայնքների դեպքում, համայնքների ղեկավարները կարող են ընտրվել.

- ուղղակի ընտրակարգով,
- ավագանու կազմից:

Համայնքի ավագանու ձևավորումը և կառուցվածքը

Համայնքների խոշորացման արդյունքում նախատեսվում է զարգացնել ավագանու ինստիտուտը՝ դարձնելով այն իշխանության լուրջ կրող: Այդ նպատակով առաջարկվում է իրականացնել ներքոհիշյալ հիմնարար փոփոխությունները:

Ավագանին ունենում է մինչև 7 **մշտական գործող հանձնաժողովներ**, որոնք ձևավորվում են ավագանու կազմից, հանձնաժողովներից 5-ը պարտադիր է: Հանձնաժողովներում ընդգրկված անդամների նվազագույն թիվը 3 –ն է: Ավագանին իր որոշմամբ կարող է ավելացնել հանձնաժողովներում ընդգրկվող անդամների թիվը: Մշտական գործող հանձնաժողովների¹⁸ ցանկը կարող է ներառել հետևյալները՝

1. Քաղաքաշինության և կոմունալ-բնակարանային հարցերի,
2. Ֆինանսա-բյուջետային և սոցիալական հարցերի,
3. Հումանիտար (կրթամշակութային) հարցերի, սպորտի և կրոնի,
4. Գործարարության, փոքր և միջին բիզնեսի աջակցման,
5. Գյուղատնտեսության, բնապահպանության և այլն:

Յուրաքանչյուր հանձնաժողով, իր անդամների կազմից, ընտրում է այդ **հանձնաժողովի նախագահին**: Հանձնաժողովի նախագահները միասին հանդիսանում են **համայնքի ավագանու նախագահությունը**:

Ավագանու նախագահության կազմից, ռոտացիոն սկզբունքով, որոշվում է **ավագանու նախագահը**:

Ավագանու նիստերը հրավիրվում են առնվազը 2 ամիսը 1 անգամ: Նիստի օրակարգը ձևավորում և նիստը վարում է ավագանու նախագահը:

Ավագանու նիստին հարցեր կարող են ներկայացնել ավագանու անդամները և համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարի կողմից ավագանու նիստին ներկայացված հարցերը, առանց բացառության, ընդգրկվում են ավագանու նիստի օրակարգի նախագծում:

Համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովի նախագահների (նախագահության անդամներ) գործունեությունը կարող է համարվել նաև վճարովի աշխատանք:

¹⁸ Հանձնաժողովներն՝ ըստ ձևավորման սկզբունքի, կարող են լինել ինչպես պարտադիր այնպես էլ՝ կամավոր:

7. Տեղական ինքնակառավարման մարմիններ - համայնքի բնակչություն կապը, բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների կայացման և համայնքային խնդիրների լուծման գործընթացներին

Ներկա վարչատարածքային բաժանումը Հայաստանի մոտավորապես 1000 բնակավայրերում ձևավորել է 915 համայնքներ: Այս իրողությունը, իր բազմաթիվ թերություններով հանդերձ, տեղական իշխանությանը, վարչարարության տեսանկյունից, բավականին մոտեցրել է բնակչությանը (1.1 բնակավայրին բաժին է ընկնում 1 համայնք): Համայնքների խոշորացման արդյունքում, զգալիորեն կրճատելով համայնքների թիվը, կառավարման մարմինները, որոշումներ ընդունելու իմաստով, բազմաթիվ բնակավայրերի բնակիչների համար զգալիորեն կհեռանան: Բնակիչները ոչ միայն բարդություններ կունենան վարչական բնույթի ծառայություններ ստանալու հարցում, այլ նաև կդժվարանան կառավարման գործընթացին մասնակից դառնալուն:

Խոշորացման արդյունքում, ծառայությունների մատչելիության վրա բացասական ազդեցություն չթողնելու նպատակով, յուրաքանչյուր նախկին համայնքում¹⁹ (բացառությամբ համայնքի կենտրոն բնակավայրից) նախատեսվում է ունենալ համայնքի ղեկավարի վարչական ներկայացուցչի հաստիք:

Համայնքի կենտրոն բնակավայրում վարչական ներկայացուցիչ չունենալը հիմնավորվում է այդ համայնքի բնակչության և ՏԻՄ –երի միջև անմիջական շփման լայն հնարավորությունների առկայությամբ, ինչը պայմանավորված է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու նստավայրի՝ այդ բնակավայրի տարածքում գտնվելու փաստով: Այն դեպքում, երբ վարչական ներկայացուցիչներին իրավական ակտերով կամրագրվի որոշակի լիազորություններ և գործառույթներ, կենտրոն բնակավայրի համար այդ լիազորություններն ու գործառույթները կարող են դրվել համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի վրա:

Բնակավայրի վարչական ներկայացուցչի թեկնածությունը համայնքի ղեկավարը ներկայացնում է այդ բնակավայրի խորհրդի (տես ստորև) համաձայնությամբ: Խորհրդի կողմից 2 անգամ համաձայնություն չստանալու դեպքում համայնքի ղեկավարն այդ բնակավայրում վարչական ներկայացուցիչ է նշանակում միանձնյա:

Մի շարք բնակավայրերում (բացառությամբ համայնքի կենտրոն բնակավայրից), կախված բնակավայրի բնակչության թվաքանակից, վարչական ներկայացուցչից բացի, համայնքի ավագանին կարող է սահմանել նաև այլ հաստիքներ:

Բնակչության մասնակցության խնդիրը լուծելու նպատակով, նախատեսվում է յուրաքանչյուր բնակավայրում ձևավորել բնակավայրի խորհուրդ (ժողով): Բնակավայրի խորհուրդը²⁰ նոր հասկացություն է, որը համահունչ է Եվրախորհրդում ձևավորված նոր զարգացումներին և ընդունված արձանագրություններին²¹:

Բնակավայրի խորհուրդը կարող է ունենալ որոշ կառավարչական բնույթի լիազորություններ, մասնավորապես՝

¹⁹ Կամ միամանդատ ընտրատարածքում, միգուցե նաև՝ յուրաքանչյուր բնակավայրում:

²⁰ Այս լուծումը, որոշ փոփոխություններով, կարելի է օգտագործել նաև Երևանի վարչական շրջաններում:

²¹ Ուտրեխտյան համաձայնագրով ընդունվել է «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» լրացուցիչ արձանագրությունը՝ տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության մասով:

- առաջարկություն է ներկայացնում համայնքի միջնաժամկետ զարգացման ծրագրով նախատեսված, իրենց բնակավայրում իրականացվող ծրագրերի առաջնահերթությունների մասին,
- բնակավայրի միամանդատ ընտրատարածքում առաջադրում է ավագանու անդամների թեկնածուներ (քննարկման առարկա կարելի է դարձնել բնակավայրերում ոչ միայն ավագանու անդամի առաջադրման, այլ նաև ընտրելու իրավունքը),
- համաձայնություն է տալիս իրենց բնակավայրում համայնքի ղեկավարի կողմից վարչական ներկայացուցչի թեկնածությանը,
- օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Բնակավայրի խորհուրդը ձևավորվում է բնակավայրի ընդհանուր ժողովի կողմից (սցենար 1) կամ ընտրությունների միջոցով (սցենար 2): Ընդհանուր ժողովն իրավական հասկացություն է, որի հետ կապված մանրամասները սահմանվում են իրավական ակտերով:

Սցենար 2-ի դեպքում բնակավայրի խորհրդի ձևավորման կարգը:

Բնակավայրի խորհրդի անդամներն ընտրվում են համայնքի բնակչության կողմից ուղղակի ընտրությունների միջոցով, համայնքի ավագանու ընտրությունների հետ միաժամանակ, բացառությամբ առաջին ընտրությունների, որը կարելի է նախատեսել, օրինակ՝ ավագանու ընտրություններից հետո երկու ամսվա ընթացքում: Խորհրդի լիազորությունների ժամանակահատվածը համընկնում է համայնքի ավագանու լիազորությունների ժամանակահատվածի հետ: Խորհրդի անդամների թիվը սահմանվում է՝ ներկա գործող համակարգի համայնքի ավագանու թվաքանակին հավասար:

Բնակավայրի խորհրդի անդամության թեկնածուների առաջադրումը կատարվում է պարտադիր և կամավոր սկզբունքներով:

Պարտադիր թեկնածուների ցանկում ընդգրկվում են համայնքում գործող կրթամշակութային կառույցների²² ղեկավարները (անկախ իրենց բնակչության վայրից), մասնավորապես՝ դպրոցի, մանկապարտեզի, ակումբի, գրադարանի և այլնի:

Որպես կամավոր առաջադրման տարբերակ, սահմանվում է թեկնածուի կողմից ինքնառաջադրման հնարավորությունը: Կամավոր սկզբունքով բնակավայրի խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել միայն տվյալ բնակավայրի բնակիչը:

Յուրաքանչյուր բնակավայրի բնակիչներից այդ բնակավայրի խորհրդի անդամության մինչև 5 թեկնածու կարող է առաջադրել համայնքի ղեկավարը:

Նոր խոշորացված համայնքների կազմում ներառված բնակավայրերում առաջին վարչական ներկայացուցչի պաշտոնը և բնակավայրի առաջին խորհուրդը կազմավորվում են համայնքի ղեկավարի ընտրություններից հետո՝ 3 ամսվա ընթացքում: Մինչև առաջին վարչական ներկայացուցչի նշանակումը՝ նրա լիազորությունները

²² Խոշոր բնակավայրերում այդ կառույցների քանակի մեծ լինելու պատճառով, թեկնածուների առաջադրման համար կարող են սահմանվել ներքին հերթականություն: Օրինակ, 5 և ավելի թվով դպրոցների և/կամ մանկապարտեզների առկայության պարագայում, առաջադրվում են 2 ամենատարիքով տնօրենները:

իրականացնում է այդ բնակավայրն ընդգրկող նախկին համայնքի ղեկավարը, իսկ բնակավայրի խորհրդի լիազորությունները՝ այդ բնակավայրն ընդգրկող նախկին համայնքի ավագանին (անցումային դրույթ):

8. Տարածքային կառավարման մարմինների (մարզպետարանների) գործառույթներն ու կառուցվածքը համայնքների խոշորացման արդյունքում: Հանրային կառավարման այլ ոլորտներում հնարավոր բարեփոխումները:

Համայնքների խոշորացման երկու սցենարների դեպքում հնարավոր կլինի իրականացնել ապակենտրոնացման տարբեր ծավալներ, որոնք նկարագրված են սույն փաստաթղթի 4-րդ մասում:

Ապակենտրոնացման մեծ ծավալների պարագայում, ինչը առկա է հատկապես սցենար 2-ի դեպքում, անհրաժեշտություն է դառնալու տարածքային պետական կառավարման ինստիտուտի վերախմաստավորումը, ինչը կարող է ենթադրել նաև ներկայիս մարզային բաժանման վերանայում:

Եթե ապակենտրոնացման սցենար 1-ի պարագայում, հնարավոր ապակենտրոնացվող լիազորությունների փոքր ծավալով պայմանավորված, տարածքային կառավարման ինստիտուտի դերակատարումն ու գործառույթները էական փոփոխություն չեն կրելու, ապա ապակենտրոնացման սցենար 2-ի պարագայում ենթադրվում են էական փոփոխություններ:

Համայնքների թվի զգալի կրճատումով և նրանց ունակությունների աճով պայմանավորված հնարավոր և նպատակահարմար կդառնա հատկապես ներկայումս տարածքային կառավարման մարմիններին վերապահված ու նրանց կողմից իրականացվող լիազորությունների ապակենտրոնացման մեծ ծավալի իրականացումը: Կապակենտրոնացվեն մարզպետարանների տնտեսական, կազմակերպչական բնույթի լիազորությունները: Պետական ծրագրերի շրջանակներում իրականացվող կապիտալ ներդրումների, կապիտալ շինարարության իրականացման պատվիրատուի գործառույթները կփոխանցվեն համայնքներին, տեղական ինքնակառավարման մարմինները հանդես կգան որպես պետության հիմնական գործընկեր:

Հանրապետական գործադիր և տարածքային կառավարման մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցելու համար առաջարկվող լիազորությունների օրինակելի ցանկը երկու առաջարկվող սցենարների դեպքում տրված է հավելված 2-ում:

Արդյունքում, մարզպետարանը որպես տարածքային կառավարման ինստիտուտ կունենա երեք խմբի հիմնական գործառույթներ՝

- մարզի տարածքում պետության կողմից իրականացվող մարզային ծրագրերի համակարգումը և օրենսդրությամբ սահմանված այլ պետական գործառույթների մարզային կտրվածքով իրականացումը (գորակոչ, քաղաքացիական պաշտպանության կազմակերպում և այլն):
- մարզային զարգացման և այլ ծրագրերի մշակումն ու դրանց իրականացման կազմակերպումը:
- վերահսկողական գործառույթներ:

Հստակ կնկարագրվեն հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների աշխատանքների համակարգման գործառույթները, հատկապես համապետական մասշտաբի (գորակոչ, մարդահամար, համատարած հաշվառման և այլ նմանատիպ աշխատանքներ), ինչպես նաև արտակարգ իրավիճակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման ընթացքում: Կշեշտադրվեն տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ պետական վերահսկողության գործառույթները, կբարձրացվեն տարածքային զարգացման ծրագրերի մշակման ու դրանց իրականացման, ինչպես նաև տարածքային պետական ու համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակեցման համար անհրաժեշտ կարողությունները: Ըստ էության մարզպետարանները պետք է դառնան մարզի զարգացման հիմնական բովանդակությունը որոշող կառուցվածքները:

Տարածքային կառավարման մարմինների գործառույթների նոր կազմը կենթադրի նաև մարզպետարանների նոր կառուցվածք, որում կբացակայեն ոլորտային գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները (գյուղատնտեսության, քաղաքաշինության, տրանսպորտի, բնապահպանության, մշակույթի, սոցիալական և այլն): Արդյունքում հնարավոր կլինի էականորեն կրճատել նաև աշխատակազմերը (ձեավորման սկզբնական շրջանում մինչև 50 հաստիքային միավոր), իսկ ազատված մասնագիտական կադրային ռեսուրսը ընգրկել նոր ձևավորված, ընդարձակ գործառույթներ իրականացնող համայնքային աշխատակազմերում ու կառույցներում:

Կարելի է դիտարկել մարզային բաժանման նոր, տարածքների աշխարհագրական, տնտեսական ու սոցիալական նմանատիպության վրա հիմնված տարբերակ: Կիրառելով եվրոպական ռեգիոնալիզացիայի գաղափարը՝ կարելի է մարզային բաժանման հիմքում դնել աշխարհագրական ու տնտեսական նմանության հիմնավորումներ, հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք, կենտրոն:

Որպես քննարկման համար առաջարկվող տարբերակ կարելի է ներկայացնել հետևյալը, որի հիմքում դրված են նախկին խորհրդային շրջանները, իսկ մարզերի քանակը կրճատվել է մինչև հինգ մարզ:

Մարզի անվանումը	Մարզի մեջ ստնող տարածքներ (ըստ ՀԽՍՀ նախկին շրջանների)	Մարզի բնակչություն	Մարզի անվանումը	Մարզի մեջ ստնող տարածքներ (ըստ նախկին շրջանների)
Հյուսիսային մարզ	Գուգարք, Թումանյան, Կալինինո, Սպիտակ, Ստեփանավան, Իջևան, Նոյեմբերյան, Արագած, Ապարան	422,997		Վանաձոր, Իջևան

Արևելյան մարզ	Կամո, Կրասնոսելսկ, Վարդենիս, Մարտունի, Սևան, Բերդ	285,426		Գավառ
Հարավային մարզ	Կապան, Մեղրի, Գորիս, Սիսիան, Ազիզբեկով, Եղեգնաձոր	211,684		Գորիս
Արևմտյան մարզ	Ամասիա, Անի, Արթիկ, Ախուրյան, Ղուկասյան, Թալին, Հոկտեմբերյան /Արմավիր, Մեծամոր/, Բաղրամյան	485,496		Արմավիր
Կենտրոն մարզ	Էջմիածին, Արարատ, Արտաշատ, Մասիս, Աբովյան, Հրազդան, Նաիրի, Աշտարակ	704,557		Արտաշատ, Աբովյան, Հրազդան

Այս դեպքում անհրաժեշտություն է առաջանալու որոշակիորեն վերանայել նաև հանրապետական գործադիր մարմինների ինչպես գործառնությունները, այնպես էլ նրանց տարածքային ստորաբաժանումների տեղաբաշխման տրամաբանությունը, և որպես տարբերակ կարող է քննարկվել հետևյալը:

Համայնքներին կարելի է փոխանցել, և/կամ նոր համայնքների աշխարհագրությամբ տեղաբաշխել նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառնությունները, պետական ծրագրերի շրջանակում զբաղվածության, տնտեսական ակտիվության գործարարության խթանման աշխատանքներով զբաղվող կազմակերպությունները, գյուղատնտեսության բնագավառում անասնաբուժական ծառայությունների կազմակերպումը, գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնները, մարզային ու համայնքային նշանակության ճանապարհների պահպանության ու շահագործման գործառնությունները, արտակարգ իրավիճակների կանխարգելման նպատակով իրականացվող պլանային ու օպերատիվ միջոցառումները, ներհամայնքային տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը և այլն:

Շուրջ հիսուն (կախված ընտրված սցենարից) խոշորացված համայնքների առկայության պարագայում հնարավոր է քննարկել նաև հանրապետական գործադիր և այլ մարմինների տարածքային ծառայությունների տեղաբաշխման նոր կառուցվածք, երբ

վերջիններին մարզային ստորաբաժանումների փոխարեն նպատակահարմար կարող են դիտվել ըստ համայնքների տեղաբաշխված տարածքային ստորաբաժանումները: Այս մոտեցումը կարող է նպատակահարմար դիտվել դատական, դատախազական, ոստիկանական, ազգային անվտանգության, հարկային ծառայությունների, արխիվների և այլ համակարգերի պարագայում:

9. Համայնքների խոշորացման իրականացման համար ահիրաժեշտ օրենսդրական բարեփոխումները, խոշորացման գործընթացի փուլերը և ժամանակացույցը

Համայնքների խոշորացում իրականացնելու և խոշորացումից հետո, տեղական ինքնակառավարման համակարգի բնականոն գործունեությունը ապահովելու համար, ահիրաժեշտ է լինելու փոփոխություններ իրականացնել հետևյալ մի շարք իրավական ակտերում՝

ա) «ՀՀ ընտրական օրենսգիրք»՝ համայնքի ավագանու անդամների ընտրակարգի, մանդատների թվաքանակի փոփոխություն, համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ընտրությունների մեխանիզմների վերանայում:

- Խոշորացված համայնքի կազմի մեջ մտնող փոքր բնակավայրերի համար ավագանու մանդատի քվոտայի նախատեսում (սցենար 1, փնջային համայնքներ):
- Երևանի ՏԻՄ ընտրությունների մոդելի կիրառում խոշոր համայնքների համար (սցենար 2, ինքնուրույն համայնքներ):
- Որոշ համայնքներում ավագանու ընտրությունների խառը՝ միամանդատ մեծամասնական և բազմամանդատ համամասնական ընտրակարգի սահմանում (սցենար 2, շրջանային համայնքներ):

բ) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք: Նոր օրենքի մշակում, որը, այլ կուտակված հարցերի հետ միասին, լուծում կտա նաև խոշորացման արդյունքում (հետևանքով) առաջացած ներքոհիշյալ խնդիրներին՝

- ՏԻՄ-երի լիազորությունների (սեփական և պատվիրակված) ընդլայնում,
- ավագանու ինստիտուտի հզորացում՝ մշտական գործող հանձնաժողովների, նախագահության և նախագահի ինստիտուտների սահմանում, դրանց լիազորությունների և փոխհարաբերությունների ամրագրում (սցենար 2, շրջանային համայնքներ),
- համայնքի ղեկավարի գործունեության շրջանակների ընդլայնում և կանոնակարգում,
- կենտրոնական և մարզային իշխանությունների հետ ՏԻՄ-երի փոխհարաբերությունների նորացում և ամրագրում և այլն:

գ) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք

Համայնքի աշխատակազմի կառուցվածքի ստանդարտացում (միասնական մոտեցումների ներմուծում), վարչական ներկայացուցչի ինստիտուտի հիմնում:

դ) «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք

- Համայնքների և բնակավայրերի ցանկի, համայնքների կարգավիճակների (սցենար 1՝ գյուղական, քաղաքային և սցենար 2՝ ինքնուրույն, շրջանային) վերանայում,
- Խոշորացման սկզբունքների և չափորոշիչների, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում ՏԻՄ-երի ընտրությունների անցկացման ժամկետների սահմանում:

ե) «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք:

Համայնքի բյուջեին ամրագրված եկամուտների և ծախսերի (մուտքերի և ելքերի) վերախմբագրում՝ համայնքային նոր լիազորություններին համահունչ:

զ) «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք:

Նոր օրենքի ընդունում:

Է) Համայնքների խոշորացումից բխող այլ ոլորտային օրենքներում համապատասխան փոփոխություններ:

ը) Կառավարության որոշումներ

- Խոշորացվող համայնքների ՏԻՄ-երի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու համար (այն դեպքում, եթե ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդից հնարավոր չլինի իրականացնել այդ ընտրությունների ֆինանսավորումը, փոփոխություններ «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում),
- խոշորացված համայնքներին առաջնահերթ պետական աջակցության տրամադրման վերաբերյալ:

Վերը թվարկված իրավական ակտերի փոփոխություններին զուգահեռ, անհրաժեշտ կլինի իրականացնել հետևյալ միջոցառումները.

- Ըստ խոշորացվող համայնքային փնջերի (սցենար 1) և ըստ ինքնուրույն և շրջանային համայնքների (սցենար 2)՝ խոշորացման սխեմաների²³ աշխատանքային տարբերակների մշակում:
- Աշխատանքային տարբերակների շուրջ բազմաոլորտ մասնագիտական (փորձագիտական) քննարկումների կազմակերպում (պետական և անկախ փորձագետների ընդգրկմամբ):
- Քննարկումների արդյունքում ստեղծված վարչատարածքային բարեփոխումների առաջարկությունների միասնական փաթեթի ձևակերպում:
- Առաջարկությունների նախնական քննարկում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում (անհրաժեշտության դեպքում, քննարկումներին կարելի է ներգրավել նաև պետական և հանրային այլ կառույցների ներկայացուցիչների):

²³ սցենարների

- Առաջարկությունների քննարկում բարեփոխվող տարածքի մարզային, համայնքային պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:
- Վերոհիշյալ քննարկումների արդյունքում, ըստ անհրաժեշտության, առաջարկությունների փաթեթի լրամշակում:
- Առաջարկությունների քննարկում միջգերատեսչական հանձնաժողովի նիստում:
- Խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպում և անցկացում:
- Վարչատարածքային բարեփոխման կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակում և դրանց քննարկում ՀՀ կառավարությունում:
- Վարչատարածքային բարեփոխումների կատարման համար անհրաժեշտ ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում ՀՀ Ազգային ժողով:
- ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան օրենքների քննարկում և ընդունում:
- Նոր կազմավորված համայնքներում ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպում:

Ժամանակացույց

Նոր խոշորացված համայնքների լիազորությունների մեկնարկը նախատեսվում է 2015 թվականի հունվարի 1-ին: Համայնքների խոշորացման աշխատանքների ժամանակացույցը բերված է **հավելված 7-ում**:

10. Համայնքների խոշորացման գործընթացի հետ կապված ծախսերը

Ակնհայտ է, որ համայնքների խոշորացման գործընթացը պահանջելու է մի շարք գործողությունների իրականացում, որոնք իրենց հերթին առաջացնելու են որոշակի ծախսեր: Այդ ծախսերի չափերը (ծավալները) և ուղղությունները հիմնականում կախված են խոշորացման սցենարի ընտրությունից, սակայն կան նաև ծախսեր, որոնք քննարկվող 2 խոշորացման սցենարների համար էլ նույնն են: Ծախսերի հաշվարկման մեթոդաբանությունը բերված է **հավելված 3 կետ 1 և կետ 2.4 -ում**:

Խոշորացման հետ կապված ծախսերը, ըստ իրենց բնույթի, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝

- ա) միանվագ ծախսեր, որոնք անհրաժեշտ են համայնքների խոշորացումը նախապատրաստելու, իրականացնելու և խոշորացման հետևանքով առաջացած խնդիրները լուծելու համար (բարեփոխման բյուջե),
- բ) խրախուսման ծախսեր²⁴, որոնք անհրաժեշտ են վարչատարածքային բարեփոխումներն ավելի սահուն և հնարավորինս առանց ցնցումների իրագործելու համար:

²⁴ Խրախուսման միջոցները հատկացվում են նորաստեղծ համայնքին, բնակչության կողմից առաջնահերթ համարվող, ենթակառուցվածքներին ուղղված (համայնքային կենտրոն, ճանապարհներ, մանկապարտեզ և այլն) կապիտալ ծրագիր (ծրագրեր) իրականացնելու համար:

«ա» խմբի ծախսերի գերակշիռ մասը անհրաժեշտ է լինելու իրականացնել պետական բյուջեի միջոցների հաշվին, չբացառելով որոշ մասը²⁵ ծախսերի կատարումը համայնքային բյուջեների միջոցներից: Տես **հավելված 8-ի I** ենթավերնագիրը:

Ստորև ներկայացվում են «ա» և «բ» խմբերին դասվող, պետական բյուջեից նախատեսվող ծախսերը, ըստ խոշորացման երկու սցենարների: Համաձայն որի՝

1-ին սցենար «ա» խումբ – 1,864 մլն դրամ, «բ» խումբ – 16,642 մլն դրամ,

2-րդ սցենար «ա» խումբ – 2,135 մլն դրամ, «բ» խումբ – 16,642 մլն դրամ:

ՀՀ պետական բյուջեից համայնքների խոշորացման հետ կապված ծախսերի գնահատում (հազ.դրամ)

Հ/հ	Պետական բյուջեից կատարվելիք ծախսեր	1-ին սցենար (գումարը)	2-րդ սցենար (գումարը)
«ա»	Համայնքների խոշորացման գործընթացի իրականացման ծախսեր	1,864,207	2,080,956
1	Խոշորացվող համայնքների բնակիչների շրջանում բացատրական աշխատանքների կազմակերպում	46,405	49,902
2	Օրենքների փոփոխությունների և/կամ լրացումների մշակում	7,600	7,600
3	Խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպում (ՀՀ Սահմանադրություն, հոդված 110),	535,555	663,037
4	Խոշորացված համայնքներում ՏԻՄ-երի նոր ընտրությունների անցկացման կազմակերպում (ՀՀ Սահմանադրություն, հոդված 110),	535,555	663,037
5	Լուծարվող և վերակազմակերպվող համայնքների այն աշխատակիցներին, որոնք դուրս են մնում աշխատանքից, արձակման նպաստների հատկացում՝ մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ 113 և 129)	631,793	618,350
6	Խոշորացված համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների և աշխատակազմերի վերապատրաստման կազմակերպում (կարող են ֆինանսավորել դոնորները)	107,299	79,029
«բ»	Համայնքների խոշորացման խրախուսման ծախսեր	16,642,349	16,642,349
7	Մուլբենցիաներ, դրամաշնորհներ և այլն	16,642,349	16,642,349
	Ընդամենը ծախսեր	18,506,556	18,723,305

Թվարկված ծախսերի մի զգալի մասը կարող են համաֆինանսավորվել նաև դոնոր կազմակերպությունների կողմից:

Համայնքների բյուջեներից խոշորացման հետ կապված ծախսերի գնահատման հաշվարկները և ծախսերի չափը բերված են **հավելված 8 -ի II -ին** ենթավերնագրում:

²⁵ Համայնքների և նրանց ենթակա կառույցների անվանափոխում, նոր կանոնադրությունների հաստատում, կնիքների պատվիրում և այլն:

11. Համայնքների խոշորացման հետ կապված ռիսկերի գնահատումը

Համայնքների խոշորացումը, որպես վարչատարածքային բարեփոխումների առավել բարդ և համակարգային ուղղություն, կարող է ուղեկցվել որոշակի ռիսկերով, որոնցից են.

- Քաղաքական և հասարակական ինստիտուտների կողմից խոշորացման գաղափարի քաղաքական շահարկումներ: Խոշորացման գաղափարը կարող է քննադատվել փոքր համայնքների տնտեսական ու դեմոգրաֆիկ իրավիճակը վատացնելու հնարավոր ռիսկի տեսանկյունից, մասնավորապես, խորհրդային տարիներին իրականացված կառավարման համակարգի փոփոխությունների արդյունքում բարձրլեռնային ու հեռավոր գյուղերի քայքայման փաստի շահարկումով: Պետք է նկատի ունենալ, որ նշված փոփոխությունների արդյունքում գյուղերը բնութագրվում էին ոչ հեռանկարային և այդ հիմքով տարաբնակեցվում էին դեպի խոշոր, նոր ձևավորվող քաղաքային, արդյունաբերական կենտրոններ: Իսկ համայնքների խոշորացման դեպքում խոսքը գնում է արդյունավետ կառավարման մասին, հատկապես շեշտադրելով խոշորացվող համայնքների կազմի մեջ մտնող բնակավայրերի համաչափ զարգացումն ապահովելու հրամայականը:
- Խոշորացման ռեֆորմի համար անհրաժեշտ խրախուսման միջոցների անբավարարություն: Խոշորացվող համայնքների կազմի մեջ մտնող բնակավայրերի համաչափ զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ ռեսուրսների անբավարարությունը կարող է առաջացնել հիմնավորված թերահավատություն, վտանգելով խոշորացման գաղափարախոսության հիմնական մոտիվները:
- Առավել մեծ վտանգ և դժգոհություններ կարող են առաջանալ, եթե համայնքների խոշորացման արդյունքում առաջացած տնտեսական էֆեկտը օգուտները, համայնքային մակարդակից տեղափոխվեն կառավարման կենտրոնական մակարդակ:
- Խոշորացված համայնքների բոլոր բնակավայրերում հավասարաչափ զարգացման ապահովման բարդություն: Այս պարագայում կարևոր են դիտվելու ինչպես բավարար ռեսուրսներով ապահովվածությունը, այնպես էլ, հստակ և արդյունավետ ծրագրերի առկայությունն ու իրականացումը:
- Բնակչության թերահավատությունը խոշորացման արդյունքների նկատմամբ: Պետք է շարունակական և հիմնավոր աշխատանքներ կազմակերպել բնակչության շրջանում՝ ներկայացնելու համար սպասվելիք առավելությունները, որոնք կարող են արտահայտվել ինչպես ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակական բարելավմամբ, այնպես էլ համայնքներում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմամբ:
- Նոր ձևավորվող համայնքային կառույցներում չընդգրկվելու և ունեցած՝ աշխատանքը կորցնելու հնարավոր հեռանկարով պայմանավորված՝



գործող համայնքների ղեկավարների և համայնքային ծառայողների (սցենար 1), ինչպես նաև մագային կառույցների աշխատակիցների (սցենար 2) դժգոհությունը և նրանց կողմից արհեստական խոչընդոտների ստեղծումը:

- Խոչորացված համայնքների մեջ մտած փոքր բնակավայրերի բնակիչների հնարավոր արտահոսք դեպի խոշոր բնակավայրեր: Այս դեպքում կարևոր են դիտվելու համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի համաչափ զարգացումն ապահովող ծրագրերը:
- Խոչորացված համայնքների կառավարման արդյունավետության իրատեսությունը:
- Խոչորացման սցենար 1-ի՝ ըստ համայնքային փնջերի խոչորացման տարբերակում լուրջ դժգոհությունների և անհանդուրժողության պատճառ կարող է հանդիսանալ նոր ձևավորված համայնքի կենտրոնի ընտրության և համայնքի անվան հետ կապված հարցերը, ինչը կարող է համայնքի բնակավայրերի միջև ստեղծել ոչ առողջ մրցակցություն:


Հավելվածներ

Հավելված 1

Խոշորացված ինքնուրույն և շրջանային համայնքների սխեմաները
(չորրորդ տարբերակ)



Գորիս համայնք



Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Գորիս	25 (19)	45.302

Միսիան համայնք



Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Միսիան	34 (18)	34.327


Եղեգնաձոր համայնք



Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Եղեգնաձոր	26 (20)	38.885


Վայք համայնք

Ջերմուկ համայնք




Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Վայք	16 (11)	12.513
Ջերմուկ	2 (2)	7.195


Վեղի համայնք, Արարատ համայնք



Արտաշատ համայնք, Այնթափ համայնք




Մասիս համայնք




Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Մասիս	27 (13)	79,058

Գավառ համայնք



Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Գավառ	12 (10)	61.591


Սևան համայնք



Համայնքի կենտրոնը	Սևան
Բնակչությունը (մարդ)	23.450

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Սևան	11 (9)	43.856


Ճամբարակ համայնք



Համայնքի կենտրոնը	Ճամբարակ
Բնակչությունը (մարդ)	7.426

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Ճամբարակ	16 (12)	16.180

Վարդենիս համայնք



Համայնքի կենտրոնը	Վարդենիս
Բնակչությունը (մարդ)	12.795

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Վարդենիս	36(16)	41.593

Մարտունի համայնք, Վարդենիկ համայնք




Համայնքի կենտրոնը	Մարտունի
Բնակչությունը (մարդ)	12.180

Համայնքի կենտրոնը	Վարդենիկ
Բնակչությունը (մարդ)	9909

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Մարտունի	12(12)	62.433
Վարդենիկ	5 (5)	29.427

Գուգարք համայնք, Վանաձոր համայնք




Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Վանաձոր	1 (1)	104.921
Գուգարք	21 (18)	28.305

Սպիտակ համայնք



Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Սպիտակ	21 (12)	43.580


Ստեփանավան համայնք



Համայնքի կենտրոնը	Ստեփանավան
Բնակչությունը (մարդ)	16.171

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Ստեփանավան	19(13)	32.017


Տաշիրի համայնք



Համայնքի կենտրոնը	Տաշիր
Բնակչությունը (մարդ)	8.685

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Տաշիր	20(14)	24.715


Աշոցք համայնք



Համայնքի կենտրոնը	Աշոցք
Բնակչությունը (մարդ)	2.491

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Աշոցք	25 (9)	10.288



Ամասիա համայնք



Համայնքի կենտրոնը	Ամասիա
Բնակչությունը (մարդ)	2.210

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Ամասիա	19(14)	8.004

Գյումրի համայնք, Ախուրյան համայնք





Համայնքի կենտրոնը	Գյումրի
Բնակչությունը (մարդ)	145.929

Համայնքի կենտրոնը	Ախուրյան
Բնակչությունը (մարդ)	9.668

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Գյումրի	1 (1)	145.929
Ախուրյան	33 (19)	49.379


Անի համայնք




Համայնքի կենտրոնը	Մարալիկ
Բնակչությունը (մարդ)	6.171

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Անի	17 (15)	23.520


Արթիկ համայնք



Թալին համայնք




Արագած համայնք



Համայնքի կենտրոնը	Ծաղկահովիտ
Բնակչությունը (մարդ)	2.139

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Արագած	22 (10)	16.367

Ծաղկաձոր համայնք, Հրազդան համայնք, Չարենցավան համայնք





Համայնքի կենտրոնը	Ծաղկաձոր
Բնակչությունը (մարդ)	1.617

Համայնքի կենտրոնը	Հրազդան
Բնակչությունը (մարդ)	53.683

Համայնքի կենտրոնը	Չարենցավան
Բնակչությունը (մարդ)	25.181

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Ծաղկաձոր	7 (1)	8.338
Հրազդան	1 (1)	53.683
Չարենցավան	9 (1)	33.519



Նաիրի համայնք



Համայնքի կենտրոնը	Եղվարդ
Բնակչությունը (մարդ)	12.478

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Նաիրի	18 (14)	64.136

Արովյան համայնք, Կոտայք համայնք




Համայնքի կենտրոնը	Արովյան
Բնակչությունը (մարդ)	47.250

Համայնքի կենտրոնը	Բալասահովիտ
Բնակչությունը (մարդ)	3.526

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Արովյան	14 (8)	69.133
Կոտայք	18 (10)	46.024


Բաղրամյան համայնք



Համայնքի կենտրոնը	Բաղրամյան
Բնակչությունը (մարդ)	1.024

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Բաղրամյան	15 (6)	22.917


Արմավիր համայնք, Մեծամոր համայնք



Համայնքի կենտրոնը	Արմավիր
Բնակչությունը (մարդ)	33.975
Համայնքի կենտրոնը	Մեծամոր
Բնակչությունը (մարդ)	10.634

Համայնքի անվանումը	Բնակավայրերի թիվը	Բնակչությունը (մարդ)
Արմավիր	19 (10)	72.350
Մեծամոր	20 (9)	60.647

Էջմիածին համայնք, Վաղարշապատ համայնք, Մուսալեռ համայնք



Հանրային լիազորությունների բաշխումը ըստ սցենարների

Լիազորություններ	Մարզպետարան	ՀԳՄ	I Սցենար	II Սցենար
Կրթություն				
1. Նախադպրոցական			X	X
2. Միջնակարգ	X	X		X
3. Միջնակարգ մասնագիտական		X		X
4. Բարձրագույն		X		
5. Մասնագիտացված		X		X
6. Ավագ դպրոց	X	X		
Սոցիալական ապահովություն				
1. Ծերանոցներ		X		X
2. Սոցիալական օգնություն ծերերին և կարիքավորներին	X	X	X	X
3. Հատուկ ծառայություններ (անտուններ, գաղթականներ և այլն)	X	X		X
4. Տեղական սոցիալական ծրագրեր	X	X		X
Առողջապահություն				
1. Առաջնային բուժօգնություն	X	X	X	X
2. Առողջության պահպանում	X	X		X
3. Հիվանդանոցներ	X	X		X
4. Պոլիկլինիկաներ	X	X		X
Մշակույթ, հանգիստ և սպորտ				
1. Ակումբներ	X	X	X	X
2. Գրադարաններ	X	X	X	X
3. Մշակույթի տներ	X	X	X	X
4. Թատրոններ	X	X	X	X
5. Թանգարաններ	X	X	X	X
6. Հանգստի տներ	X	X	X	X
7. Սպորտային հիմնարկներ	X	X	X	X
Տնտեսական ծառայություններ				
1. Ջրմուղ		X	X	X
2. Կոյուղի		X	X	X
3. Էլեկտրաէներգիա		X		
4. Գազ		X		
Սպասարկում և շրջակա միջավայրի պահպանություն				
1. Աղբահանություն	X	X	X	X
2. Բարեկարգում և կանաչապատում		X	X	X
3. Գերեզմանատներ		X	X	X
4. Շրջակա միջավայրի պահպանություն	X	X		X
5. Աղբավայրի շահագործում և թափոնների վերամշակում	X	X		X
Հաղորդակցություն տրանսպորտ				
1. Ճանապարհներ	X	X	X	X
2. Փողոցային լուսավորություն			X	X

3. Հասարակական տրանսպորտ		X		X
4. Կապ		X		X
Քաղաքաշինություն				
1. Համայնքի գլխավոր հատակագծի կազմում	X	X	X	X
2. Համայնքի տնտեսական զարգացում	X	X		X
3. Տուրիզմ	X	X		X
Կառավարում				
1. ԶԱԳՍ, լիցենզավորում, թույլտվությունների և այլն		X		X
2. Վարչական այլ լիազորությունների (ընտրող, գրանցում և այլն)	X	X	X	X
3. Ոստիկանություն		X		X
4. Համայնքի բյուջեի հարկային եկամուտների հավաքագրում			X	X
5. Հրշեջ պաշտպանություն	X	X		X
6. Քաղաքացիների իրավունքների պաշտպանություն	X	X	X	X
7. Սպառողների շահերի պաշտպանություն	X	X	X	X

Համայնքների խոշորացման հետ կապված պետական բյուջեի ծախսերի և համայնքների բյուջետային օգուտների գնահատման մեթոդաբանություն

Ներածություն

Սույն մեթոդաբանությունը սահմանում է համայնքների խոշորացման հետ կապված օգուտների հաշվարկման կամ գնահատման խնդիրները, մեթոդները, գործիքները և քայլերը:

Սույն մեթոդաբանությամբ համայնքների խոշորացման հետ կապված ծախսերի ու օգուտների հաշվարկը կամ գնահատումը կատարվել է համայնքների խոշորացման երկու սցենարների (տարբերակների) կտրվածքով՝

- I սցենար – փնջային (ըստ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի»),
- II սցենար – շրջանային (ձևավորել 50 համայնքներ՝ հիմնականում Խորհրդային Հայաստանի վարչական շրջանների կտրվածքով):

Համայնքների խոշորացման հետ կապված ծախսերը բաժանվել են երկու խմբերի՝ ՀՀ պետական բյուջեից կատարվող ծախսեր և նոր ձևավորվող համայնքների բյուջեներից կատարվող ծախսեր: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դոնոր կազմակերպությունները ևս կարող են իրենց վրա վերցնել այդ երկու խմբերի ծախսերի ինչ-որ մասը:

Ծախսերի հաշվարկները կատարվել են խոշորացվող պիլոտային համայնքների օրինակով, այնուհետ դրանք ընդհանրացվել են ՀՀ մասշտաբով՝ ըստ համայնքների խոշորացման երկու սցենարների: Ընդհանրացումները կատարվել են՝ հաշվի առնելով սպասվելիք խոշորացվող և նոր ձևավորվող համայնքների թվերը, բնակչության թվերը, խոշորացված համայնքներում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ կատարվելիք կապիտալ ներդրումների ծրագրերի թիվը և տեսակները (հաշվի առնելով «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի» չափորոշիչները):

Ծախսերի հաշվարկման ժամանակ օգտագործվել են նման ծախսերի համար արդեն իսկ կիրառվող մեթոդները (օրինակ, ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպում), կիրառվող մեթոդի տարածումը համանման միջոցառման/ծախսի հաշվարկման վրա (օրինակ, ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման ծախսերի հաշվարկման մեթոդի տարածումը տեղական հանրաքվեների ծախսերի հաշվարկման վրա), ինչպես նաև օգտագործվել են նոր մեթոդներ (օրինակ, բնակիչների շրջանում համայնքների խոշորացման բացատրական աշխատանքների կազմակերպում):

1. Պետական բյուջեի ծախսերի գնահատում

Պետական բյուջեից կատարվելիք ծախսերն՝ ըստ կատարման հաջորդականության, հետևյալներն են.

Ա. Համայնքների խոշորացման գործընթացի իրականացման ծախսեր

- խոշորացվող համայնքների բնակիչների շրջանում համայնքների խոշորացման հետ կապված բացատրական աշխատանքների կազմակերպում (կարող են համաֆինանսավորել դոնորները),
- օրենքների փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերի մշակում և քննարկում (կարող են համաֆինանսավորել դոնորները),
- խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպում (ՀՀ Սահմանադրություն, հոդված 110),
- նոր ձևավորվող համայնքներում ՏԻՄ-երի նոր ընտրությունների անցկացման կազմակերպում (ՀՀ Սահմանադրություն, հոդված 110),
- լուծարվող և վերակազմակերպվող համայնքների այն աշխատակիցներին, որոնք դուրս են մնում աշխատանքից, արձակման նպաստների հատկացում՝ մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ 113 և 129),
- նոր ձևավորվող համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների և աշխատակազմերի վերապատրաստման կազմակերպում (կարող են համաֆինանսավորել դոնորները):

Բ. Համայնքների խոշորացման խրախուսման ծախսեր

- նոր ձևավորվող համայնքներին սուբվենցիաների (դրամաշնորհների և այլնի) տրամադրում՝ կապիտալ ներդրումների ծրագրեր իրականացնելու համար (կարող են համաֆինանսավորել դոնորները):

Վերը նշված ծախսերի հաշվարկման համար կիրառված մեթոդաբանությունը ներկայացված է ստորև:

Խոշորացվող համայնքների բնակիչների շրջանում համայնքների խոշորացման հետ կապված բացատրական աշխատանքների կազմակերպման ծախսեր

Այս աշխատանքները կազմակերպվելու են մի քանի եղանակներով՝

- հանրապետական հեռուստաալիքներով,
- մարզային հեռուստաալիքներով,
- Էլեկտրոնային կայքերով,
- տպագիր մամուլով,
- տեղերում անմիջական հանդիպումներով:

Հեռուստաալիքներով, կայքերով և տպագիր մամուլով իրականացվող աշխատանքների ծախսերը հաշվարկվել են ըստ միավոր ժամի արժեքի և հաղորդումների ժամաֆոնդի:

Բացատրական աշխատանքներ պետք է իրականացվեն խոշորացվող բոլոր համայնքներում: Այդ աշխատանքներում պետք է ընդգրկվեն տեղական

ինքնակառավարման ոլորտի պատասխանատուներ և փորձագետներ, ընդ որում, յուրաքանչյուր համայնք պետք է այցելեն երկու փորձագետներ: Աշխատանքների կատարման ծախսերը հաշվարկվել են աշխատանքների ծավալը՝ մարդ/օր, բազմապատկելով 1մարդ/օրի արժեքով և այդ համայնքներ այցելությունների տրանսպորտային ծախսերով:

Օրենքների փոփոխությունների և/կամ լրացումների նախագծերի մշակման և քննարկման ծախսեր

Համայնքների խոշորացման հետ կապված օրենքների փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվելու «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներում և ՀՀ ընտրական օրենսգրքում: Նշված օրենքներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի մշակումների և քննարկումների ծախսերը հաշվարկվել են ըստ դրանց մշակման և քննարկման համար պահանջվող մարդ/օրերի և 1 մարդ/օրի արժեքի:

Խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպման ծախսեր

Խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպման ծախսերը հաշվարկվել են համաձայն ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման ծախսերի գործող մեթոդաբանության:

Նոր ձևավորվող համայնքներում ՏԻՄ-երի նոր ընտրությունների անցկացման կազմակերպման ծախսեր²⁶

Նոր ձևավորվող համայնքներում ՏԻՄ-երի նոր ընտրությունների անցկացման կազմակերպման ծախսերը հաշվարկվել են համաձայն ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման ծախսերի գործող մեթոդաբանության:

Լուծարվող և վերակազմակերպվող համայնքների այն աշխատակիցներին, որոնք դուրս են մնում աշխատանքից արձակման նպաստների հատկացում՝ մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով

Այս ծախսերի հաշվարկները կատարվել են ըստ սույն մեթոդաբանությամբ հաշվարկված լուծարվող և վերակազմակերպվող համայնքների դուրս մնացող աշխատակիցների թվաքանակի հաշվարկի և համայնքների աշխատակազմերի միջին աշխատավարձերի:

Նոր ձևավորվող համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների և համայնքային ծառայողների վերապատրաստման ծախսեր

Խոշորացված համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների և աշխատակազմերի վերապատրաստման ծախսերը հաշվարկվել են 2011 և 2012թթ. մեկ

²⁶ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այս ծախսերը կատարվելու էին նաև ՏԻՄ-երի հերթական ընտրությունների ժամանակ, ընդ որում, այդ ընտրություններն անց էին կացվելու ավելի մեծ թվով համայնքներում:

համայնքային ծառայողի և մեկ ՏԻՄ-ի ներկայացուցչի հաշվով կատարված վերապատրաստման ծախսերի և սպասվելիք վերապատրաստվողների թվաքանակի հիման վրա:

Կապիտալ ներդրումների ծրագրեր իրականացնելու համար նոր ձևավորվող համայնքներին սուբվենցիաներ (դրամաշնորհներ և այլն) տրամադրելու ծախսեր

Նոր ձևավորվող համայնքներին սուբվենցիաների (դրամաշնորհների և այլնի) տրամադրման հետ կապված ծախսերը հաշվարկվել են ըստ տիպային ծրագրերի²⁷ (մանկապարտեզի, մշակույթի տան/ակումբի, բուժ.կետի և դպրոցի վերանորոգում, վերակառուցում կամ ընդարձակում) ծախսերի, ընդ որում, հաշվարկը կատարվել է համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում՝ մեկ խոշորացված համայնքում մեկ ծրագիր սկզբունքով, իսկ երկրորդ սցենարի դեպքում՝ առաջին սցենարի ընդհանուր գումարը համամասնորեն ըստ համայնքների բաշխման սկզբունքով:

2. Նոր ձևավորվող համայնքի բյուջեի օգուտների և ծախսերի գնահատում

Որպես նոր ձևավորվող համայնքի բյուջեի հիմք դիտարկվում է խոշորացվող կենտրոն համայնքի բյուջեն, որի ընդհանուր եկամուտները և ծախսերը, խոշորացման արդյունքում, որոշակիորեն կաճեն²⁸:

Նոր ձևավորվող համայնքի բյուջեի ծախսերը և օգուտները հաշվարկելու կամ գնահատելու մեթոդաբանությունն իրենից ներկայացնում է հետևյալ հաջորդական գործողությունների ամբողջությունը՝

2.1. Նոր ձևավորվող համայնքի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի և օգուտների հաշվարկում

Համայնքների խոշորացման ուղղակի բյուջետային օգուտները (տնտեսումները) հիմնականում ստացվում են խոշորացվող բոլոր համայնքների բյուջեներում, ըստ ծախսերի գործառական դասակարգման, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի կրճատումից՝ ի հաշիվ խոշորացման արդյունքում այդ համայնքների ՏԻՄ-երի և աշխատակազմերի լուծարման:

Նոր ձևավորվող համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով բյուջետային ծախսերի գնահատման մեթոդաբանությունն իր մեջ ներառում է հետևյալ քայլերի կատարումը՝

- հաշվարկել նոր ձևավորվող համայնքի բնակչության ընդհանուր թիվը՝ գումարելով խոշորացվող բոլոր համայնքների բնակչության թվերը,

²⁷ Տիպային ծրագրերը հիմնականում ընտրվել են ըստ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի» համայնքների խոշորացման չափորոշիչների:

²⁸ Խոշորացվող կենտրոն համայնքի գործող բյուջեի ընդհանուր եկամուտների հետ համեմատությամբ, նոր ձևավորվող համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտները կաճեն՝ ինչպես սեփական եկամուտների (ի հաշիվ հարկային բազայի ընդլայնման), այնպես էլ պաշտոնական դրամաշնորհների (ի հաշիվ համայնքի բնակչության թվի ավելացման, ինչպես նաև համայնքի խոշորացման հետ կապված այլ գործոնների) ծավալների աճի շնորհիվ:

- հաշվարկել խոշորացվող բոլոր համայնքների արդեն եզրափակված տարվա (տվյալ դեպքում՝ 2012թ.) բյուջեների ընդհանուր, վարչական, ֆոնդային մասերի փաստացի կատարված ծախսերում ՏԻՄ-երի գործունեության բոլոր ոլորտներում կատարված ծախսերի բացարձակ մեծությունները և տեսակարար կշիռները,
- հաշվարկել նոր ձևավորվող համայնքի բյուջեի մոտավոր ընդհանուր ծախսերը՝ գումարելով խոշորացվող բոլոր համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերը²⁹, և դրա հիման վրա որոշել նոր ձևավորվող համայնքի մոտավոր տեղը Համայնքի Ծախսային Քաղաքականության Մեթոդաբանությամբ³⁰ (այսուհետ՝ ՀԾՔՄ) դասակարգված համայնքների խմբերից մեկում՝ ըստ բյուջետային կարողությունների չափորոշիչի (համաձայն ՀԾՔՄ աղյուսակ 1-ի),
- հիմնավորել նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի աշխատողների թվաքանակը և աշխատավարձերի դրույքաչափերը, դրանց հիման վրա կազմել համայնքի աշխատակազմի հաստիքային ցուցակը՝ վերլուծելով խոշորացվող բոլոր համայնքների աշխատակազմերի գործող հաստիքային ցուցակները և համադրելով խոշորացվող կենտրոն համայնքի աշխատակազմի գործող հաստիքային ցուցակը և ՀԾՔՄ-ամբ համայնքների տվյալ խմբի միջին բյուջետային կարողություններ ունեցող համայնքի աշխատակազմի համար կազմված հաստիքային ցուցակը
- տալ նոր ձևավորվող համայնքի բյուջեի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի տնտեսագիտական հիմնավորումները և կազմել այդ ծախսերի նախահաշիվը՝ հիմնվելով համայնքի աշխատակազմի նախորդ կետով կազմված հաստիքային ցուցակի և խոշորացվող կենտրոն համայնքի աշխատակազմի այդ ծախսերի նախահաշվի վրա,
- ամփոփել նոր ձևավորվող համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը և օգուտները:

2.2. Նոր ձևավորվող համայնքի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման այլ ուղղություններով ծախսերի և օգուտների գնահատում

Ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ այլ ուղղություններով ՏԻՄ-երի կողմից կատարվող ծախսերն առնչվում են որոշակի ոլորտներում օրենքով նրանց վերապահված հանրային ծառայությունների մատուցմանն ու կապիտալ աշխատանքների կատարմանը: ՀՀ ՏԻ համակարգի նախկին տարիների փորձը ցույց է տալիս, որ ՀՀ համայնքների մեծամասնության (հատկապես՝ փոքր ու միջին) բյուջետային միջոցները հիմնականում չեն բավարարում՝ բնակչությանը պատշաճ ծավալով և որակով ծառայություններ մատուցելու և անհրաժեշտ կապիտալ

²⁹ Ենթադրվում է, որ նոր ձևավորվող համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերը մոտավորապես հավասար կլինի խոշորացվող բոլոր համայնքների բյուջեների ընդհանուր ծախսերի մեխանիկական գումարին:

³⁰ «Համայնքի ծախսային քաղաքականության մեթոդաբանություն» հետազոտությունը կատարվել է 2012թ. վերջին՝ ԱՄՆ ՄԶԳ / Քաունթերֆարթ Ինթերնեշնլի ՔՀՆՏԻԱԾ-ի աջակցությամբ «Համայնքների ֆինանսիստների միավորում» շեք կողմից իրականացված ծրագրի շրջանակներում: Այն տեղադրված է ՀՀ տարածքային կառավարման նախարարության համացանցային կայքում՝ www.mta.gov.am, և արդեն դրված է կիրառության մեջ ՀՀ բոլոր համայնքների համար:

աշխատանքներ կատարելու համար: Հետևաբար, խոշորացվող համայնքների կողմից համապատասխան ոլորտներում նախկինում կատարված ծախսերը սույն մեթոդաբանությամբ դիտարկվում են որպես նոր ձևավորվող համայնքի կողմից նույն բնակավայրերում կատարվելիք նվազագույն ծախսեր նույն ուղղություններով: Այսինքն, դրանք նոր ձևավորվող համայնքի բյուջեում դիտարկվում են որպես բազային ծախսեր՝ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում առնվազն նույն ծավալի և որակի հանրային ծառայություններ մատուցելու և կապիտալ աշխատանքներ կատարելու համար:

Նոր ձևավորվող համայնքի՝ այլ ուղղություններով բյուջետային ծախսերի գնահատման մեթոդաբանությունն իր մեջ ներառում է հետևյալ քայլերի կատարումը՝

- ուսումնասիրել նոր ձևավորվող համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը, կազմել ՏԻՄ-երի կողմից մատուցվելիք հանրային ծառայությունների և կատարվելիք կապիտալ աշխատանքների մոտավոր ցանկերը,
- մոտավոր գնահատել ենթակառուցվածքների պահպանման, շահագործման և նորոգման ծախսերը և կազմել համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի ծախսերն ըստ գործառական դասակարգման (համաձայն ՀՕՔՄ 4.2 կետի դրույթների և օգտագործելով ՀՕՔՄ աղյուսակներ 2-10-ի ձևը)³¹,
- գնահատել նոր ձևավորվող համայնքի՝ ՏԻՄ-երի գործունեության առանձին ոլորտներում հանրային ծառայությունների գծով ծախսերը և օգուտները:

2.3. Նոր ձևավորվող համայնքի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ընդհանուր ծախսերի և օգուտների գնահատում

Ընդհանրացնելով նախորդ երկու կետերում կատարված քայլերը՝ պետք է գնահատել նոր ձևավորվող համայնքի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ընդհանուր ծախսերը և օգուտները, և հանգել համապատասխան եզրակացությունների:

2.4. Նոր ձևավորվող համայնքի լրացուցիչ ծախսերի գնահատում

Խոշորացման արդյունքում նոր ձևավորվող համայնքի համար կարող են առաջանալ նաև լրացուցիչ ծախսեր, որոնք ևս հնարավորինս գնահատման ենթակա են: Դրանց թվին են պատկանում հետևյալները՝

- խոշորացվող համայնքների լուծարման գործընթացի իրականացման ծախսեր՝ նրանց ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցումից հանելու համար,

³¹ Համայնքների խոշորացման սկզբում, նոր ձևավորվող համայնքի բյուջեի ընթացիկ և կապիտալ ծախսերը պետք է առնվազն ներառեն խոշորացվող համայնքների 2012թ. բյուջեներում նույն ուղղություններով կատարված ծախսերի ծավալները:

Այս ծախսերի հաշվարկը կատարվում է խոշորացվող համայնքների թվի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով համապատասխան պետական տուրքի սահմանված դրույքաչափի բազմապատկումով:

- խոշորացվող համայնքների սեփականություն համարվող գույքի գույքագրման, նոր ձևավորվող համայնքի սեփականությանը հանձնման, ընդունման, տեղափոխման և համայնքի վարչական շենքերում տեղադրման ծախսեր,

Այս ծախսերի հաշվարկը կատարվում է խոշորացվող բոլոր համայնքների սեփականություն համարվող գույքի գույքագրման, հանձնման-ընդունման, տեղափոխման և տեղադրման համար անհրաժեշտ մոտավոր ծախսերի գումարումով:

- նոր ձևավորվող համայնքի համար անվանափոխման, նոր կլոր կնիքի, դրոշմակնիքի, ձևաթղթերի, ցուցանակների և այլ նմանատիպ անհրաժեշտ պարագաների պատրաստման, նոր հաշվեհամարի բացման ծախսեր,

Այս ծախսերի հաշվարկը կատարվում է համայնքի անվանափոխման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով համապատասխան պետական տուրքի սահմանված դրույքաչափի, համայնքի նոր կլոր կնիքի, դրոշմակնիքի, ցուցանակների ու այլ պարագաների պատրաստման համար անհրաժեշտ մոտավոր ծախսերի գումարումով:

- նոր ձևավորվող համայնքի աշխատակազմում համայնքային ծառայության նոր թափուր տեղերը զբաղեցնելու համար մրցույթների կազմակերպման ծախսեր,

Այս ծախսերի հաշվարկը կատարվում է համայնքային ծառայության նոր թափուր տեղերի թվի և մեկ տեղի համար մրցույթի կազմակերպման մոտավոր ծախսերի բազմապատկումով:

- նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի և բնակավայրերի վարչական ներկայացուցիչների միջև անխափան կապի ապահովման ծախսեր,

Այս ծախսերի հաշվարկը կատարվում է համապատասխան կապի միջոցների ձեռքբերման և ինտերնետի անցկացման ծախսերի գումարումով:

- խոշորացվող համայնքների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ արտաքին աուդիտի անցկացման ծախսեր,

Այս ծախսերի հաշվարկը կատարվում է խոշորացվող բոլոր համայնքների թվի և մեկ համայնքի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ արտաքին աուդիտի անցկացման միջինացված ծախսերի բազմապատկումով:

- նոր ձևավորվող համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի բնակչությանը մինչև հիմա ՏԻՄ-երի կողմից չմատուցված հանրային ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների պահպանման, շահագործման և նորոգման լրացուցիչ ծախսեր:

Այս ծախսերի գնահատումը կապված է որոշակի բարդությունների հետ: Այդ պատճառով, համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման և նորոգման համար անհրաժեշտ ընթացիկ և կապիտալ ծախսերի գնահատումը

կապվում է Հայաստանում հետագա ֆինանսական ապակենտրոնացման նոր քաղաքականության մշակման և իրականացման անհրաժեշտության հետ:

Խոշորացման արդյունքում աշխատակազմի և նրա պահպանման ծախսերի գծով օգուտների գնահատման հաշվարկ (Սցենար1)

Որպես հաշվարկման օրինակ պայմանականորեն վերցրվել է «Գերմանական տեխնիկական համագործակցության» GIZ կազմակերպության կողմից մշակված Կոտայքի մարզի խոշորացման սխեմայի «Գառնի» խոշորացված համայնքը:

Նոր ձևավորվող «Գառնի» համայնքի կազմում ընդգրկված են խոշորացվող 6 համայնքներ: Ստորև բերված են այդ համայնքների բնակչության և աշխատակազմերի հաստիքների թվերը, ինչպես նաև համայնքային բյուջեների 2012թ. բյուջեների հանրագումարային փաստացի ծախսերն ըստ գործառական դասակարգման:

Բնակչության և աշխատակազմերի աշխատողների թվերը

Հ/հ	Համայնքի անվանումը	Համայնքի բնակչության թիվը, մարդ	Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը, մարդ
1	Գառնի (փնջի կենտրոն)	7,373	20
2	Գեղարդ	734	5
3	Գեղաղիբ	399	7
4	Գողթ	1,908	16
5	Հացավան	621	5
6	Ողջաբերդ	992	9
	Ընդամենը	12,027	62

2012թ. բյուջեների հանրագումարային փաստացի ծախսերն ըստ գործառական դասակարգման

Հ/հ	Ծախսի անվանումը	2012թ. փաստացի ծախսեր					
		Ընդամենը, հազ. դրամ	%	Վարչ.բյուջ., հազ. դրամ	%	Ֆոնդ.բյուջ., հազ. դրամ	%
	Ընդամենը ծախսեր*, այդ թվում՝	130,771.7	100.0				
	Վարչական բյուջե	167,412.7	128.0	167,412.7	100.0		
	Ֆոնդային բյուջե	-36,641.0	-28.0			-36,641.0	100.0
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	94,668.6	72.4	89,303.1	53.3	5,365.5	-14.6
2	Պաշտպանություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Տնտեսական հարաբերություններ	-49,244.3	-37.7	600.0	0.4	-49,844.3	136.0
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	11,156.8	8.5	9,294.8	5.6	1,862.0	-5.1
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	4,267.3	3.3	495.0	0.3	3,772.3	-10.3
7	Առողջապահություն	250.0	0.2	250.0	0.1	0.0	0.0
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	16,077.8	12.3	15,100.3	9.0	977.5	-2.7
9	Կրթություն	45,545.6	34.8	44,319.5	26.5	1,226.1	-3.3
10	Սոցիալական պաշտպանություն	8,050.0	6.2	8,050.0	4.8	0.0	0.0
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր*	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	Վարչ. բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդ. բյուջե կատարվ. հատկացումներ			0.0	0.0		

*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների

Խոշորացվող բոլոր համայնքների 2012թ. բյուջեների հանրագումարային փաստացի ծախսերը կազմել են 130,771.7 հազ. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի ծախսերը՝ 167,412.7 հազ. դրամ (ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ 128.0%) և ֆոնդային բյուջեի ծախսերը՝ -36,641.0 հազ. դրամ (ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ -28.0%): Դա նշանակում է, որ նոր ձևավորվող համայնքը համապատասխանում է ՀՕՔՄ-ամբ դասակարգված համայնքների 6-րդ խմբին՝ ըստ բյուջետային կարողությունների չափորոշիչի (բյուջեի ընդհանուր ծախսերը գտնվում են 120,0-250,0 մլն դրամի սահմաններում՝ համաձայն ՀՕՔՄ աղյուսակ 1-ի):

Խոշորացվող բոլոր համայնքների հանրագումարային բյուջեում, ըստ ծախսերի գործառնական դասակարգման, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կազմում են 94,668.6 հազ. դրամ (ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ 72.4%), այդ թվում՝ վարչական բյուջեում՝ 89,303.1 հազ. դրամ (վարչական բյուջեի ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ 53.3%) և ֆոնդային բյուջեում՝ 5,365.5 հազ. դրամ (ֆոնդային բյուջեի ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ -14.6%):

«Գառնի» խոշորացված արդյունքում նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի հաստիքային ցուցակի կազմումը հիմնվում է խոշորացվող կենտրոն Գառնի ներկայիս համայնքի աշխատակազմի գործող՝ 2013թ. հաստիքային ցուցակի վրա:

Ուսումնասիրելով և վերլուծելով խոշորացվող 6 համայնքների աշխատակազմերի գործող՝ 2013թ. հաստիքային ցուցակները, այնուհետև այն համադրելով ՀՕՔՄ-ամբ համայնքների 6-րդ խմբի համայնքի աշխատակազմի համար նախատեսված ցուցանիշների հետ, նոր ձևավորվող «Գառնի» համայնքի աշխատակազմի համար առաջարկվում է հետևյալ հաստիքային ցուցակը:

Նոր ձևավորվող՝ «Գառնի» համայնքի աշխատակազմի հաստիքային ցուցակը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Դրույքաչափը (դրամ)	Տարեկան գումարը (դրամ)
Քաղաքական և հայեցողական պաշտոններ			
Համայնքի ղեկավար	1	230,000	2,760,000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	160,000	1,920,000
Համայնքի ղեկավարի խորհրդակ.	1	110,000	1,320,000
Վարչական ներկայացուցիչներ	5		
Գեղարդ գյուղ	1	120,000	1,440,000
Գեղաղիր գյուղ	1	110,000	1,320,000
Գողթ գյուղ	1	140,000	1,680,000
Հացավան գյուղ	1	120,000	1,440,000
Ողջաբերդ գյուղ	1	130,000	1,560,000
Համայնքային ծառայության պաշտոններ			
Աշխատակազմի քարտուղար	1	150,000	1,800,000
Գլխավոր մասնագետ	2	135,000	3,240,000
Առաջատար մասնագետ	3	110,000	3,960,000
1-ին կարգի մասնագետ	2	95,000	2,280,000
2-րդ կարգի մասնագետ	2	80,000	1,920,000
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի			
Համակարգչային օպերատոր	2	70,000	1,680,000

Վարորդ	2	85,000	2,040,000
Գործավար-քարտուղար	1	60,000	720,000
Հավաքարար	1	50,000	600,000
Պահակ	1	60,000	720,000
Քաղաքացիական աշխատանք կատարող			
Զին. սեղանի աշխատակից	1	65,000	780,000
Ընդամենը	26	2,765,000	33,180,000

Գառնի համայնքի աշխատակազմի գործող՝ 2013թ. հաստիքային ցուցակի (20 աշխատող) հետ համեմատությամբ, նոր ձևավորվող «Գառնի» համայնքի աշխատակազմի հաստիքային ցուցակում ավելացվել է 6 հաստիք, այդ թվում՝ 5 հայեցողական պաշտոններ՝ համայնքի կազմում ընդգրկված 5 բնակավայրերի 1-ական վարչական ներկայացուցիչները, և 1 տեխնիկական սպասարկում իրականացնող՝ համայնքի աշխատակազմի վարչական շենքի պահակը³²:

Փաստորեն, 6 խոշորացվող համայնքների աշխատակազմերի 62 հաստիքի փոխարեն նոր ձևավորված համայնքում կլինեն միայն 26 աշխատողները : Պետությունը և նոր ձևավորվող համայնքի ՏԻՄ-երը պետք է ձեռնարկեն որոշակի միջոցներ աշխատանքը կորցնող մարդկանց տեղավորելու իրենց մասնագիտությանը մոտ այլ աշխատանքի կամ իրականացնելու նրանց վերապատրաստում:

Նոր ձևավորվող համայնքի (բնակչության թիվը՝ 12,027 մարդ) ղեկավարի աշխատավարձի դրույքաչափը (230.0 հազ. դրամ) կազմում է ՀՀ ԱԺ պատգամավորի աշխատավարձի դրույքաչափի (331.6 հազ. դրամ) 69.4%-ը և չի գերազանցում օրենքով սահմանված չափը³³ (5001-ից մինչև 20000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 70%-ը): Նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի դրույքաչափերն ընտրվել են այնպես, որպեսզի դրանք քիչ չլինեն Գառնի համայնքի աշխատակազմի 2013թ. հաստիքային ցուցակում տեղ գտած համապատասխան աշխատակիցների աշխատավարձերի դրույքաչափերից՝ կլորացնելով դեպի վերև, և հնարավորինս մոտ լինեն ՀԾՔՄ-ամբ դասակարգված համայնքների 6-րդ խմբի միջինից ցածր բյուջետային կարողություններ ունեցող համայնքի աշխատակազմի համապատասխան աշխատակիցների աշխատավարձերի դրույքաչափերին:

Նոր ձևավորվող համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցիչների աշխատավարձերի դրույքաչափերն ընտրվել են տարբերակված մոտեցումով կախված այդ բնակավայրերի բնակչության:

Համեմատելով Գառնի համայնքի գործող աշխատակազմի 2013թ. և նոր ձևավորվող խոշորացված «Գառնի» համայնքի աշխատակազմի աշխատանքի վարձատրության տարեկան գումարները, տեսնում ենք, որ դրանց տարբերությունը կազմում է մոտ 9,371.5 հազ. դրամ: Դա այն տարեկան գումարն է, որը պետք է ավելացնել Գառնի համայնքի

³² Այս հաստիքը չհիմնավորված բացակայում է Գառնի համայնքի աշխատակազմի 2013թ. հաստիքային ցուցակում:

³³ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 27, «Հայաստանի Հանրապետության օրենսդիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 26.12.2002թ., փոփոխված՝ 13.11.2012թ.

աշխատակազմի 2013թ. հաստիքացուցակով նախատեսված աշխատակիցների աշխատանքի վարձատրության տարեկան գումարին՝ նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված աշխատակիցների աշխատանքի վարձատրությունն ապահովելու համար:

Հիմնվելով նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի՝ վերևում կազմված հաստիքային ցուցակի, խոշորացվող կենտրոն համայնքի՝ Գառնու 2013թ. և ՀԾՔՄ հավելված 5-ում բերված՝ 6-րդ խմբի համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի նախահաշիվների վրա և հաշվի առնելով բազմաբնակավայր համայնքի մի շարք առանձնահատկությունները³⁴, կազմվել է նոր ձևավորվող խոշորացված «Գառնի» համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի մոտավոր նախահաշիվը (տես ստորև): Համաձայն այդ նախահաշվի, նոր ձևավորվող համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով տարեկան ծախսերը կազմում են մոտ 54,545.5 հազ. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի (ընթացիկ) ծախսերը՝ 44,180.0 հազ. դրամ և ֆոնդային բյուջեի (ոչ ֆինանսական ակտիվների գծով) ծախսերը՝ 10,365.5 հազ. դրամ³⁵:

«Գառնի» խոշորացված համայնքի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով բյուջետային ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Բյուջետային ծախսերի անվանումները	Նախ. գումարը, հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝	54,545.5
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	44,180.0
1.	Աշխատանքի վարձատրություն, այդ թվում՝ աշխատավարձեր և հավելավճարներ	33,180.0
2.	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում, այդ թվում	10,700.0
2.1	Շարունակական ծախսեր, այդ թվում	4,800.0
	- Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	100.0
	- Էներգետիկ ծառայություններ	4,000.0
	- Կոմունալ ծառայություններ	200.0
	- Կապի ծառայություններ	500.0
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն	
2.2	Գործուղումների և շրջագայությունների ծախսեր, այդ թվում	300.0
	- Ներքին գործուղումներ	100.0
	- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	

³⁴ Նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի հեռավորությունը կենտրոնից, դրանց միջև մշտական կապի անհրաժեշտությունը, համայնքի աշխատակազմի վարչական շենքի կապիտալ նորոգման, համակարգչային և այլ սարքավորումներով վերազինման, կոշտ և փափուկ կահույքի ու այլ հիմնական միջոցների ձեռքբերման անհրաժեշտությունը, բյուջեում պահուստային միջոցների և այլ ծախսերի նախատեսման անհրաժեշտությունը և այլն:

³⁵ Նոր ձևավորվող համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նախատեսվել են խոշորացվող բոլոր համայնքների 2012թ. բյուջեների նույն գծով փաստացի ծախսերի պահպանման (5,365.5 հազ. դրամ), ինչպես նաև կենտրոն համայնքի վարչական շենքի կապիտալ նորոգման, վարչական սարքավորումների, այլ գույքի ձեռքբերման լրացուցիչ կարիքների (ևս 5,000.0 հազ. դրամ) գնահատման հիման վրա:

	- Այլ տրանսպորտային ծախսեր	200.0
2.3	Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում, այդ թվում	900.0
	- Վարչական և կառավարչական ծառայություններ	150.0
	- Համակարգչային ծառայություններ	100.0
	- Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	
	- Տեղեկատվական ծառայություններ	100.0
	- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	
	- Ներկայացուցչական ծախսեր	500.0
	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	50.0
2.4	Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	100.0
2.5	Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր), այդ թվում	1,600.0
	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	1,500.0
	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	100.0
2.6	Նյութեր, այդ թվում	3,000.0
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	500.0
	- Գյուղատնտեսական ապրանքներ	
	- Վերապատրաստման և ուսուցման նյութեր	
	- Տրանսպորտային նյութեր	2,500.0
	- Շրջակա միջավայրի պահպանության և գիտական նյութեր	
	- Առողջապահական և յարթատոր նյութեր	
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	
	- Հատուկ նպատակային այլ նյութեր	
3.	Տոկոսավճարներ	
4.	Սուբսիդիաներ	
5.	Դրամաշնորհներ	
6.	Մոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	
7.	Այլ ծախսեր, այդ թվում	300.0
	- պահուստային միջոցներ	200.0
	- այլ ծախսեր	100.0
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում	10,365.5
1.	Հիմնական միջոցներ, այդ թվում	10,365.5
	- Շենքեր և շինություններ	7,000.0
	- Մեքենաներ և սարքավորումներ (տրանսպորտային, վարչական, այլ)	2,000.0
	- Այլ հիմնական միջոցներ	1,365.5
2.	Պաշարներ	
3.	Բարձրարժեք ակտիվներ	
4.	Զարտադրված ակտիվներ	

Կատարված հաշվարկի արդյունքում, «Գառնի» խոշորացված համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով բյուջետային ընդհանուր օգուտները կազմում են 45,123.1 հազ. դրամ (տես ստորև), որը համարվում է համայնքների խոշորացման արդյունքում առաջացած ազատ գումար: Նոր ձևավորվող համայնքի ՏԻՄ-երը դա կարող են ուղղել ինչպես հանրային ծառայությունների այլ տեսակների մատուցման ծավալների ընդլայնմանը և որակի բարձրացմանը, այնպես էլ

համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը և կապիտալ ներդրումների կատարմանը:

«Գառնի» խոշորացված համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (ԸԲՀԾ) գծով բյուջետային օգուտները (հազ.դրամ)

Հ/հ	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը,	Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
1	Խոշորացվող համայնքների 2012թ. բյուջեներում ԸԲՀԾ գծով ծախսերը	94,668.6	89,303.1	5,365.5
2	Նոր ձևավորվող համայնքի բյուջեի ԸԲՀԾ գծով ծախսերը	54,545.5	44,180.0	10,365.5
3	Նոր ձևավորվող համայնքի բյուջեի ԸԲՀԾ գծով օգուտները (3 = 1 - 2)	+40,123.1	+45,123.1	-5,000.0

Խոշորացման արդյունքում աշխատակազմի և նրա պահպանման ծախսերի գծով օգուտների գնահատման հաշվարկ (Սցենար 2)

Որպես հաշվարկման օրինակ, պայմանականորեն վերցրվել է միջին ցուցանիշներ ունեցող «Նաիրի» խոշորացված համայնքը:

Նոր ձևավորվող «Նաիրիի» համայնքի կազմում ընդգրկված են խոշորացվող 18 համայնքներ: Ստորև բերված են այդ համայնքների բնակչության և աշխատակազմերի հաստիքների թվերը, ինչպես նաև 2012թ. համայնքային բյուջեների հանրագումարային փաստացի ծախսերն՝ ըստ գործառական դասակարգման:

Բնակչության և աշխատակազմերի աշխատողների թվերը

Հ/հ	Համայնքի անվանումը	Համայնքի բնակչության թիվը, մարդ	Աշխատակազմի աշխատողների թիվը, մարդ
1	Եղվարդ (համայնքի կենտրոն)	12,478	39
2	Արագյուղ	1,113	16
3	Արգել	3,291	18
4	Բուժական	1,701	14
5	Գետամեջ	706	7
6	Զովունի	5,496	19
7	Զորավան	1,411	14
8	Թեղենիք	691	9
9	Մրգաշեն	2,106	12
10	Նոր Արտամետ	1,284	9
11	Նոր Գեղի	6,011	17
12	Նոր Երզնկա	1,814	11
13	Նոր Հաճրն	10,421	23
14	Պռոշյան	5,298	19
15	Սարալանջ	364	5
16	Քանաքեռավան	3,550	16
17	Քասախ	5,663	17
18	Քարաշամբ	738	5
	ընդամենը	64,136	270

2012թ. բյուջեների հանրագումարային փաստացի ծախսերն ըստ գործառական դասակարգման

Հ/հ	Ծախսի անվանումը	2012թ. փաստացի ծախսեր					
		Ընդամենը հազ. դրամ	%	Վարչ.բյուջ. հազ. դրամ	%	Ֆոնդ.բյուջ. հազ. դրամ	%
	Ընդամենը ծախսեր*, այդ թվում`	1,060,688.8	100.0				
	Վարչական բյուջե	1,025,808.0	96.7	1,025,808.0	100.0		
	Ֆոնդային բյուջե	38,130.8	3.6			38,130.8	100.0
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	481,920.6	45.4	412,248.9	40.2	69,671.6	182.7
2	Պաշտպանություն	250.0	0.0	250.0	0.0	0.0	0.0

3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	450.0	0.0	450.0	0.0	0.0	0.0
4	Տնտեսական հարաբերություններ	-218,327.4	-20.6	3,221.4	0.3	-221,548.8	-581.0
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	33,608.1	3.2	23,453.1	2.3	10,154.9	26.6
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	139,565.9	13.2	94,272.3	9.2	45,293.6	118.8
7	Առողջապահություն	2,349.2	0.2	2,349.2	0.2	0.0	0.0
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	147,392.9	13.9	86,104.5	8.4	61,288.4	160.7
9	Կրթություն	382,549.8	36.1	309,278.8	30.1	73,271.0	192.2
10	Սոցիալական պաշտպանություն	90,929.8	8.6	90,929.8	8.9	0.0	0.0
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր*	0.0	0.0	3,250.0	0.3	0.0	0.0
	Վարչ. բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդ. բյուջե կատարվ. հատկացումներ			3,250.0	0.3		

*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների

Խոշորացվող բոլոր համայնքների 2012թ. բյուջեների հանրագումարային փաստացի ծախսերը կազմել են 1,060,688.8 հազ. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի ծախսերը՝ 1,025,808.0 հազ. դրամ (ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ 96.7%) և ֆոնդային բյուջեի ծախսերը՝ 38,130.8 հազ. դրամ (ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ 3.6%): Դա նշանակում է, որ նոր ձևավորվող համայնքը համապատասխանում է ՀՕՔ մեթոդաբանությամբ դասակարգված՝ համայնքների 8-րդ խմբին՝ ըստ բյուջետային կարողությունների չափորոշիչի (բյուջեի ընդհանուր ծախսերը գտնվում են 500,0–5000,0 մլն դրամի սահմաններում՝ համաձայն ՀՕՔՄ աղյուսակ 1-ի):

Խոշորացվող բոլոր համայնքների բյուջեներում, ըստ ծախսերի գործառական դասակարգման, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 481,920.6 հազ. դրամ (ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ 45.4%), այդ թվում՝ վարչական բյուջեում՝ 412,248.9 հազ. դրամ (վարչական բյուջեի ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ 40.2%) և ֆոնդային բյուջեում՝ 69,671.6 հազ. դրամ (ֆոնդային բյուջեի ընդհանուր ծախսերում տեսակարար կշիռը՝ 182.7%):

«Նաիրի» համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի հաստիքային ցուցակի կազմումը հիմնվում է խոշորացվող կենտրոն համայնքի Եղվարդի աշխատակազմի գործող՝ 2013թ. հաստիքային ցուցակի վրա :

Ուսումնասիրելով և վերլուծելով խոշորացվող 18 համայնքների (Եղվարդ, Արագյուղ, Արգել, Բուժական, Գետամեջ, Ջովունի, Ջորավան, Թեղենիք, Մրգաշեն, Նոր Արտամետ, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Նոր Հաճրն, Պողոսյան, Սարալանջ, Քանաքեռավան, Քասախ, Քարաշամբ) աշխատակազմերի գործող՝ 2013թ. հաստիքային ցուցակները, այնուհետև այն համադրելով ՀՕՔՄ-ամբ համայնքների 8-րդ խմբի համայնքի աշխատակազմի համար նախատեսված ցուցանիշերի հետ, նոր ձևավորվող՝ «Նաիրի» համայնքի աշխատակազմի համար առաջարկվում է հետևյալ հաստիքային ցուցակը:

Նոր ձևավորվող՝ «Նաիրիի շրջան» համայնքի աշխատակազմի հաստիքային ցուցակը

Հաստիքի անվանումը	Հաստիքային	Դրույքաչափը	Տարեկան գումարը
-------------------	------------	-------------	-----------------

	միավորը	(դրամ)	(դրամ)
Քաղաքական և հայեցողական պաշտոններ			
Համայնքի ղեկավար	1	250,000	3,000,000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	190,000	2,280,000
Համայնքի ղեկավարի խորհրդակ	1	170,000	2,040,000
Համայնքի ղեկավարի օգնական	1	120,000	1,440,000
Վարչական ներկայացուցիչներ	1	130,000	1,560,000
Արագյուղ			
Արգել	2	140,000	3,360,000
Բուժական	1	140,000	1,680,000
Գետամեջ	1	120,000	1,440,000
Զովունի	2	150,000	3,600,000
Զորավան	1	130,000	1,560,000
Թեղենիք	1	120,000	1,440,000
Մրգաշեն	1	140,000	1,680,000
Նոր Արտամետ	1	130,000	1,560,000
Նոր Գեղի	2	150,000	3,600,000
Նոր Երզնկա	1	140,000	1,680,000
Նոր Հաճրն	4	150,000	7,200,000
Պռոշյան	2	150,000	3,600,000
Սարալանջ	1	110,000	1,320,000
Քանաքեռավան	2	140,000	3,360,000
Քասախ	2	150,000	3,600,000
Քարաշամբ	1	120,000	1,440,000
<i>Ընդամենը</i>	<i>30</i>		<i>52,440,000</i>
Համայնքային ծառայության պաշտոններ			
Աշխատակազմի քարտուղար	1	180,000	2,160,000
Բաժնի պետ	7	170,000	14,280,000
Գլխավոր մասնագետ	7	150,000	12,600,000
Առաջատար մասնագետ	9	140,000	15,120,000
1-ին կարգի մասնագետ	9	120,000	12,960,000
2-րդ կարգի մասնագետ	9	100,000	10,800,000
<i>Ընդամենը</i>	<i>42</i>		<i>67,920,000</i>
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ			
Համակարգչային օպերատոր	3	100,000	3,600,000
Վարորդ	3	120,000	4,320,000
Գործավար-քարտուղար	2	80,000	1,920,000
Տնտեսվար	1	90,000	1,080,000
Հավաքարար	2	70,000	1,680,000
Պահակ	3	70,000	2,520,000
Տեխնիկական այլ աշխատ.	1	70,000	840,000
<i>Ընդամենը</i>	<i>15</i>		<i>15,960,000</i>
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Եղվարդի տարածքային բաժին			
Բաժնի պետ	1	112,000	1,344,000
Առաջին կարգի մասնագետ	1	57,000	684,000
<i>Ընդամենը</i>	<i>2</i>		<i>2,028,000</i>
Քաղաքացիական այլ աշխատանք կատարող			
Զին. սեղանի աշխատակից	1	80,000	960,000
<i>Ընդամենը</i>	<i>1</i>		<i>960,000</i>

Ընդհանուրը	90	11,609,000	139,308,000
------------	----	------------	-------------

Եղվարդ համայնքի աշխատակազմի 2013թ. հաստիքային ցուցակի (39 աշխատող) հետ համեմատությամբ, նոր ձևավորվող «Նաիրիի» համայնքի աշխատակազմի հաստիքային ցուցակում նախատեսվել է ընդամենը 90 հաստիք, այսինքն ավելացվել է 51 հաստիք, այդ թվում՝

- 27 հայեցողական պաշտոնների հաստիքներ, այդ թվում՝ համայնքի ղեկավարի խորհրդականի՝ 1, և համայնքի կազմում ընդգրկված 10 բնակավայրերի 1-ական, 6 բնակավայրերի 2-ական և 1 բնակավայրի 4 վարչական ներկայացուցիչներ,
- 15 համայնքային ծառայողների հաստիքներ, այդ թվում՝ բաժնի պետ՝ 3 (միաժամանակ, գլխավոր մասնագետների թիվը 1-ով պակասեցնելով), առաջատար մասնագետ՝ 1, 1-ին կարգի մասնագետ՝ 5 և 2-րդ կարգի մասնագետ՝ 7,
- 8 տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողների հաստիքներ, այդ թվում՝ համակարգչային օպերատոր՝ 3, վարորդ՝ 2, գործավար-քարտուղար՝ 2, տնտեսվար՝ 1, պահակ՝ 2 և տեխնիկական այլ աշխատող՝ 1 (միաժամանակ, հարկահավաքի 2 և անասնաբույժի 1 հաստիքները վերացվել են, քանի որ հարկահավաքի հաստիքը համայնքային ծառայության պաշտոն է դիտարկվում, և 2013թ.-ից սկսած՝ անասնաբուժական ծառայության ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից ուղղակիորեն՝ շրջանցելով համայնքի բյուջեի միջոցով ֆինանսավորումը),
- 1 քաղաքացիական այլ աշխատանք կատարողի հաստիք՝ օրինակ, զինվորական սեղանի աշխատակցի համար:

Փաստորեն, 18 խոշորացվող համայնքների աշխատակազմերի 270 աշխատողների փոխարեն նոր ձևավորված համայնքում կլինեն առավելագույնը 90 աշխատողները: Պետությունը և նոր ձևավորվող համայնքի ՏԻՄ-երը պետք է ձեռնարկեն որոշակի միջոցներ՝ աշխատանքը կորցնող մարդկանց տեղավորելու իրենց մասնագիտությանը մոտ այլ աշխատանքի կամ իրականացնելու նրանց վերապատրաստում:

Նոր ձևավորվող համայնքի (բնակչության թիվը՝ 64,136 մարդ) ղեկավարի աշխատավարձի դրույքաչափը (250.0 հազ. դրամ) կազմում է ՀՀ ԱԺ պատգամավորի աշխատավարձի դրույքաչափի (331.6 հազ. դրամ) 75.4%-ը և չի գերազանցում օրենքով սահմանված չափը 36 (20,001-ից մինչև 75,000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 80%-ը): Նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի դրույքաչափերն ընտրվել են այնպես, որպեսզի դրանք զգալիորեն գերազանցեն Եղվարդ համայնքի աշխատակազմի 2013թ. հաստիքային ցուցակում տեղ գտած համապատասխան աշխատակիցների աշխատավարձերի դրույքաչափերը, և հնարավորինս մոտ լինեն ՀԾՔՄ-ամբ դասակարգված՝ համայնքների 8-րդ խմբի միջինից որոշ չափով ցածր բյուջետային կարողություններ ունեցող համայնքի աշխատակազմի համապատասխան աշխատակիցների աշխատավարձերի դրույքաչափերին:

³⁶ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 27, «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 26.12.2002թ., փոփոխված՝ 13.11.2012թ.

Նոր ձևավորվող համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ներկայացուցիչների թիվը և աշխատավարձերի դրույքաչափերն ընտրվել են տարբերակված մոտեցումով՝ կախված այդ բնակավայրերի բնակչության թվից:

Համեմատելով Եղվարդ համայնքի աշխատակազմի 2013թ. և նոր ձևավորվող «Նաիրի» համայնքի աշխատակազմի համար առաջարկված հաստիքացուցակներով նախատեսված աշխատակիցների աշխատանքի վարձատրության տարեկան գումարները, տեսնում ենք, որ դրանց տարբերությունը կազմում է մոտ 99,240.0 հազ. դրամ: Դա այն տարեկան գումարն է, որը պետք է ավելացնել Եղվարդ համայնքի աշխատակազմի 2013թ. հաստիքացուցակով նախատեսված աշխատակիցների աշխատանքի վարձատրության տարեկան գումարին՝ նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված աշխատակիցների աշխատանքի վարձատրությունն ապահովելու համար:

Հիմնվելով նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի՝ վերևում կազմված հաստիքային ցուցակի, խոշորացվող կենտրոն համայնքի՝ Եղվարդի 2013թ. և ՀԾՔՄ հավելված 5-ում բերված՝ համայնքների 8-րդ խմբի համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի նախահաշիվների վրա և հաշվի առնելով բազմաբնակավայր համայնքի մի շարք առանձնահատկությունները³⁷, կազմվել է նոր ձևավորվող «Նաիրի» համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի մոտավոր նախահաշիվը (տես ստորև): Համաձայն այդ նախահաշվի, նոր ձևավորվող համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով տարեկան ծախսերը կազմում են մոտ 180,308.0 հազ. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի (ընթացիկ) ծախսերը՝ 165,308.0 հազ. դրամ և ֆոնդային բյուջեի (ոչ ֆինանսական ակտիվների գծով) ծախսերը՝ 15,000.0 հազ. դրամ³⁸:

«Նաիրի» համայնքի ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով բյուջետային ծախսերի՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Հ/հ	Բյուջետային ծախսերի անվանումները	Նախ. գումարը, հազ. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝	180,308.0
Ա.	ԸՆԾԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝	165,308.0
1.	Աշխատանքի վարձատրություն, այդ թվում՝ աշխատավարձեր և հավելավճարներ	139,308.0
2.	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում, այդ թվում	25,300.0
2.1	Շարունակական ծախսեր, այդ թվում	9,600.0

³⁷ Նոր ձևավորվող համայնքի բնակավայրերի հեռավորությունը կենտրոնից, դրանց միջև մշտական կապի անհրաժեշտությունը, համայնքի աշխատակազմի վարչական շենքի կապիտալ նորոգման, համակարգչային և այլ սարքավորումներով վերազինման, կոշտ և փափուկ կահույքի ու այլ հիմնական միջոցների ձեռքբերման անհրաժեշտությունը, բյուջեում պահուստային միջոցների և այլ ծախսերի նախատեսման անհրաժեշտությունը և այլն:

³⁸ Նոր ձևավորվող համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նախատեսվել են խոշորացվող բոլոր համայնքների 2012թ. բյուջեների նույն գծով փաստացի ծախսերի վերլուծության (հավելված 1), ինչպես նաև կենտրոն համայնքի վարչական շենքի կապիտալ նորոգման, վարչական սարքավորումների, այլ գույքի ձեռքբերման լրացուցիչ կարիքների գնահատման հիման վրա:

	- Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	300.0
	- Էներգետիկ ծառայություններ	5,000.0
	- Կոմունալ ծառայություններ	500.0
	- Կապի ծառայություններ	3,500.0
	- Ապահովագրական ծախսեր	300.0
	- Գույքի և սարքավորումների վարձակալություն	
2.2	Գործուղումների և շրջագայությունների ծախսեր, այդ թվում	1,400.0
	- Ներքին գործուղումներ	200.0
	- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	1,000.0
	- Այլ տրանսպորտային ծախսեր	200.0
2.3	Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում, այդ թվում	3,600.0
	- Վարչական և կառավարչական ծառայություններ	200.0
	- Համակարգչային ծառայություններ	600.0
	- Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	200.0
	- Տեղեկատվական ծառայություններ	600.0
	- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	
	- Ներկայացուցչական ծախսեր	1,000.0
	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1,000.0
2.4	Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	200.0
2.5	Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր), այդ թվում	3,500.0
	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	2,500.0
	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	1,000.0
2.6	Նյութեր, այդ թվում	7,000.0
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	1,500.0
	- Գյուղատնտեսական ապրանքներ	
	- Վերապատրաստման և ուսուցման նյութեր	100.0
	- Տրանսպորտային նյութեր	3,400.0
	- Շրջակա միջավայրի պահպանության և գիտական նյութեր	
	- Առողջապահական և յաբորատոր նյութեր	
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	1,000.0
	- Հատուկ նպատակային այլ նյութեր	1,000.0
3.	Տոկոսավճարներ	
4.	Սուբսիդիաներ	
5.	Դրամաշնորհներ	
6.	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	
7.	Այլ ծախսեր, այդ թվում	700.0
	- պահուստային միջոցներ	500.0
	- այլ ծախսեր	200.0
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում	15,000.0
1.	Հիմնական միջոցներ, այդ թվում	15,000.0
	- Շենքեր և շինություններ	10,000.0
	- Մեքենաներ և սարքավորումներ (տրանսպորտային, վարչական, այլ)	3,000.0
	- Այլ հիմնական միջոցներ	2,000.0
2.	Պաշարներ	
3.	Բարձրարժեք ակտիվներ	
4.	Չարտադրված ակտիվներ	

Կատարված հաշվարկի արդյունքում, «Նաիրին» համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով բյուջետային ընդհանուր օգուտները կազմում են 301,612.6 հազ. դրամ (այդ թվում՝ վարչական բյուջեի օգուտները՝ 246,940.9 հազ. դրամ, ֆոնդային բյուջեի օգուտները՝ 54,671.6 հազ. դրամ), որը համարվում է համայնքների խոշորացման արդյունքում առաջացած ազատ գումարը (տես ստորև): Նոր ձևավորվող համայնքի ՏԻՄ-երը դա կարող են ուղղել ինչպես հանրային ծառայությունների այլ տեսակների մատուցման ծավալների ընդլայնմանը և որակի բարձրացմանը, այնպես էլ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը և կապիտալ ներդրումների կատարմանը:

**«Նաիրի» համայնքի՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների
(ԸԲՀԾ) գծով բյուջետային օգուտները (հազ.դրմ)**

Հ/հ	Ցուցանիշի անվանումը	Ընդամենը,	Վարչական բյուջե,	Ֆոնդային բյուջե,
1	Խոշորացվող համայնքների բյուջեներում ԸԲՀԾ գծով ծախսերը	481,920.6	412,248.9	69,671.6
2	Նոր ձևավորվող համայնքի բյուջեի ԸԲՀԾ գծով ծախսերը	180,308.0	165,308.0	15,000.0
3	Նոր ձևավորվող համայնքի բյուջեի ԸԲՀԾ գծով օգուտները (3 = 1 - 2)	+301,612.6	+246,940.9	+54,671.6

Շրջանային համայնքներում ավագանու մանդատների սպասվելիք քանակները ըստ համայնքների

	Համայնք	Բնակչություն (մարդ)	Բնակավայրերի քանակը	Ավագանու մանդատների քանակը									
				Տարբերակ 1 Ըստ բնակչության թվաքանակի			Տարբերակ 2 Ըստ մեծամասնական տեղերի հավասար			Տարբերակ 3 Ըստ հաստատուն թվաքանակի			
				Ընդամենը	Մեծամասն*.		Համամասն.	Ընդամենը	Մեծամասն.	Համամասն.	Ընդամենը	Մեծամասն.	Համամասն.
					Ըստ բնակավայրերի	Ըստ գյուղ. սովետն.							
1	Մեղրի	12,123	13	26	13	10	13	26	13	13	34	13	21
2	Սյունիք	61,330	37	62 ³⁹	37	20	25	74	37	37	58	37	21
3	Գորիս	45,302	25	46	25	19	21	50	25	25	46	25	21
4	Սիսիան	34,327	34	55	34	18	21	68	34	34	55	34	21
5	Եղեգնաձոր	38,885	26	47	26	20	21	52	26	26	47	26	21
6	Վայք	12,513	16	29	16	11	13	32	16	16	37	16	21
7	Ջերմուկ	7,195	2	13	2	2	11	4	2	2	23	2	21
8	Վեդի	55,594	17	42	17	9	25	34	17	17	38	17	21
9	Արարատ	46,613	14	35	14	7	21	28	14	14	35	14	21
10	Արտաշատ	72,390	25	50	25	15	25	50	25	25	46	25	21
11	Մասիս	63,941	25	50	25	13	25	50	25	25	46	25	21
12	Այնթափ	38,357	16	37	16	11	21	32	16	16	37	16	21
13	Թումանյան	16,414	31	44	31	17	13	62	31	31	52	31	21
14	Գուգարք	28,305	21	36	21	18	15	42	21	21	42	21	21
15	Սպիտակ	15,303	21	34	21	12	13	42	21	21	42	21	21
16	Ստեփանավան	16,171	19	32	19	13	13	38	19	19	40	19	21
17	Տաշիր	8,685	20	31	20	14	11	40	20	20	41	20	21
18	Աշոցք	10,288	25	38	25	9	13	50	25	25	46	25	21
19	Ամասիա	8,004	19	30	19	14	11	38	19	19	40	19	21
20	Ախուրյան	49,379	33	54	33	19	21	66	33	33	54	33	21
21	Անի	23,520	17	32	17	15	15	34	17	17	38	17	21
22	Արթիկ	54,082	24	49	24	13	25	48	24	24	45	24	21
23	Գավառ	61,591	12	37	12	10	25	24	12	12	33	12	21
24	Սևան	43,856	11	32	11	9	21	22	11	11	32	11	21
25	Ճամբարակ	16,180	16	29	16	12	13	32	16	16	37	16	21
26	Վարդենիս	41,593	36	57	36	16	21	72	36	36	57	36	21

³⁹ Կարմիր վանդակները այն համայնքներն են, որտեղ մեծամասնական մանդատների քանակը գերազանցում է համամասնական մանդատների քանակին:

*Մեծամասնական ընտրակարգով ավագանու մանդատների քանակը՝ ըստ գյուղ. սովետների նույնն է նաև Տարբերակ 2-ի և 3-ի համար:

27	Մարտունի	62,433	12	37	12	12	25	24	12	12	33	12	21
28	Վարդենիկ	29,427	5	20	5	5	15	10	5	5	26	5	21
29	Իջևան	47,494	19	40	19	16	21	38	19	19	40	19	21
30	Դիլիջան	23,120	7	22	7	4	15	14	7	7	28	7	21
31	Տավուշ	30,346	17	38	17	16	21	34	17	17	38	17	21
32	Նոյեմբերյան	31,056	19	40	19	11	21	38	19	19	40	19	21
33	Թալին	38,380	41	62	41	13	21	82	41	41	62	41	21
34	Աշտարակ	75,154	30	65	30	14	35	60	30	30	51	30	21
35	Ապարան	25,044	21	36	21	12	15	42	21	21	42	21	21
36	Արագած	16,367	22	35	22	10	13	44	22	22	43	22	21
37	Զարենցավան	33,519	9	30	9	1	21	18	9	9	30	9	21
38	Ծաղկաձոր	8,338	7	18	7	1	11	14	7	7	28	7	21
39	Կոտայք	46,024	18	39	18	10	21	36	18	18	39	18	21
40	Աբովյան	69,133	14	39	14	8	25	28	14	14	35	14	21
41	Նաիրի	64,136	18	43	18	14	25	36	18	18	39	18	21
42	Բաղրամյան	22,917	15	30	15	6	15	30	15	15	36	15	21
43	Արմավիր	72,350	19	44	19	10	25	38	19	19	40	19	21
44	Մեծամոր	60,647	20	45	20	9	25	40	20	20	41	20	21
45	Վաղարշապատ	55,137	23	48	23	8	25	46	23	23	44	23	21
46	Մուսալեռ	40,933	19	40	19	5	21	38	19	19	40	19	21

Համայնքների խոշորացման աշխատանքների ժամանակացույց

h/h	Աշխատանքների նկարագրությունը	Պատասխանատու կատարողներ	Ժամկետը
1.	Համայնքների խոշորացման երկու սցենարների (փնջային և շրջանային) խոշորացման համապատասխան հիմնավորումների նախապատրաստում	ՀՀ ՏԿՆ	
2.	Համայնքների խոշորացման երկու սցենարների նախապատրաստական աշխատանքների իրականացման համար միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում	ՀՀ ՏԿՆ	
3.	Համայնքների խոշորացման երկու սցենարների շուրջ Բազմաոլորտ մասնագիտական քննարկումների և անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթի մշակման համար փորձագիտական խմբի ստեղծում	ՀՀ ՏԿՆ	
4	Համայնքների խոշորացման երկու սցենարների վերաբերյալ մշակված առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը	ՀՀ ՏԿՆ	
5.	ՀՀ կառավարության կողմից քննարկված խոշորացման երկու սցենարների առաջարկության քննարկում ՀՀ Անվտանգության խորհրդում և քաղաքական որոշման կայացում	ՀՀ Անվտանգության խորհրդի աշխատակազմ	
6.	Ընտրված խոշորացման տարբերակի քննարկում համայնքների բնակիչների, մարզային համայնքային պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, և հանրային լուսման կազմակերպում	ՀՀ ՏԿՆ, ՀԿ-ներ, քարոզչական խմբեր և այլն	
7.	ԱԽ-ի կողմից ընտրված խոշորացման տարբերակի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի՝ մասնավորապես. ՀՀ վարչատարածքային բաժանման մասին, ՀՀ տեղական ինքնակառավարման մասին, Ընտրական օրենսգրքում և այլ օրենքներում անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ օրենսդրական փաթեթի մշակում և ընդունում՝ ՀՀ կառավարության կողմից	ՀՀ ՏԿՆ ՀՀ Արդարադատ. նախ, ՀՀ Ֆի. նախ	
8.	Ընտրված խոշորացման տարբերակի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթի ներկայացում ԵԽ-ի փորձագիտական եզրակացության	ՀՀ ՏԿՆ ՀՀ Արդարադատ. նախ,	
9.	Խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպում և անցկացում	ՀՀ ԿԸՀ, ՀՀ ՏԿՆ	
10.	* 3-րդ կետում նշված օրենսդրական նախագծերի փաթեթի ներկայացում ՀՀ ԱԺ	ՀՀ կառավարություն, ՀՀ ՏԿՆ	
11.	Օրենսդրական փաթեթի ընդունում ՀՀ ԱԺ	ՀՀ Ազգային ժողով,	

	զարնանային նստաշրջանում	ՀՀ ՏԿՆ	
12.	Նոր կազմավորվող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպում և անցկացում	ՀՀ ԿԸՀ, ՀՀ ՏԿՆ	
13.	Վարչատարածքային նոր բաժանման կիրարկումն 01.01.2015թ ապահովելու համար նոր կազմավորված համայնքների համար բյուջետային գործընթացի կազմակերպում /դոտացիաների հաշվարկ, բյուջեների կազմում/	ՀՀ ՏԿ ՀՀ Ֆին. նախ.	
14.	Վարչատարածքային նոր բաժանման կիրարկում	ՀՀ ՏԿՆ	

Համայնքների խոշորացման գործընթացի ծախսերի հաշվարկը

Ըստ համայնքների խոշորացման I սցենարի խոշորացվող և չխոշորացվող համայնքների թիվը որոշվել է իրականացված փորձնական ծրագրերի հիման վրա (տես ստորև): Ըստ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի» փորձնական ծրագրեր են իրականացվել Հայաստանի 5 մարզերում՝ Արագածոտնի, Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի և Կոտայքի:

Վերը նշված ծրագրերի արդյունքում 5 մարզերում ձևավորվում են 105 համայնքներ, իսկ մեկ մարզի կտրվածքով միջին հաշվով ձևավորվում են 23 համայնքներ՝

$$(114 \times 35 + 44 \times 7 + 109 \times 18 + 97 \times 25 + 67 \times 20):$$

$$114 + 44 + 109 + 97 + 67$$

Համայնքների խոշորացման փորձնական ծրագրերի տվյալները

Մարզեր	Գործող համայնքների թիվը	Խոշորացվող համայնքների թիվը	Չխոշորացվող համայնքների թիվը	Համայնքների թիվը խոշորացումից հետո
Արագածոտն	114	94	20	35
Վայոց Ձոր	44	43	1	7
Սյունիք	109	109	0	18
Արարատ	97	92	5	25
Կոտայք	67	62	5	20
Ընդամենը	431	400	31	105

Եթե նշված 5 մարզերի համայնքների խոշորացման արդյունքները տարածենք մնացած հինգ մարզերի համայնքների վրա (483 համայնքներ), ապա կստանանք մեկ մարզին միջին հաշվով ընկնող համայնքների թիվը՝ 26 $[(483 \times 23) / 431]$:

Այսպիսով, մնացած 5 մարզերում համայնքների թիվը խոշորացումից հետո կլինի 130 (5×26) : Ամբողջ Հայաստանի մասշտաբով համայնքների թիվը խոշորացումից հետո կլինի 235 $(105 + 130)$:

Նմանատիպ հաշվարկներով փորձնական ծրագրեր իրականացված մարզերում չեն խոշորացվում 31 համայնքներ, իսկ միջին հաշվով յուրաքանչյուր մարզում չեն խոշորացվում 7 համայնքներ: Եթե այդ միջին ցուցանիշը տարածենք մնացած 5 մարզերի վրա, ապա կստանանք, որ այդ մարզերից յուրաքանչյուրում չեն խոշորացվելու 8 համայնքներ $[(483 \times 7) / 431]$:

Մնացած 5 մարզերում չխոշորացվող համայնքների թիվը կկազմի՝ 40 (5×8) : Այսպիսով, ամբողջ Հայաստանի մասշտաբով չխոշորացվող համայնքների թիվը կկազմի՝ 71 $(31 + 40)$, իսկ խոշորացվող համայնքների թիվը կկազմի՝ 843 $(914 - 71)$:

Համայնքների խոշորացման II սցենարով նախատեսվում է ձևավորել 51 համայնքներ՝ հիմնականում նախկին շրջանների կտրվածքով, ընդ որում չեն խոշորացվելու Երևան, Գյումրի, Վանաձոր, Էջմիածին և Հրազդան համայնքները: Այսպիսով, խոշորացվելու են 910 համայնքները:

I. Պետական բյուջեից կատարվելիք ծախսերի գնահատում

Ստորև բերված է պետական բյուջեից ըստ կատարման հաջորդականության կատարվելիք ծախսերի գնահատումը: Այդ ծախսերի որոշ մասը կարող են ֆինանսավորվել կամ համաֆինանսավորվել միջազգային կազմակերպությունների, բարերարների և այլ սուբյեկտների կողմից:

ՀՀ պետական բյուջեից համայնքների խոշորացման հետ կապված ծախսերի գնահատումը

Հ/հ	Պետական բյուջեից կատարվելիք ծախսեր	1-ին սցենար (գումարը, դրամ)	2-րդ սցենար (գումարը, դրամ)
Ա	Համայնքների խոշորացման գործընթացի իրականացման ծախսեր	1,864,205,890	2,080,956,332
1	Խոշորացվող համայնքների բնակիչների շրջանում բացատրական աշխատանքների կազմակերպում	46,404,600	49,902,000
2	Օրենքների փոփոխությունների և/կամ լրացումների մշակում	7,600,000	7,600,000
3	Խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպում (ՀՀ Սահմանադրություն, հոդված 110),	535,554,685	663,037,366
4	Խոշորացված համայնքներում ՏԻՄ-երի նոր ընտրությունների անցկացման կազմակերպում (ՀՀ Սահմանադրություն, հոդված 110),	535,554,685	663,037,366
5	Լուծարվող և վերակազմակերպվող համայնքների այն աշխատակիցներին, որոնք դուրս են մնում աշխատանքից, արձակման նպաստների հատկացում՝ մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով (ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ 113 և 129)	631,792,800	618,350,000
6	Խոշորացված համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների և աշխատակազմերի վերապատրաստման կազմակերպում (կարող են ֆինանսավորել դոնորները)	107,299,120	79,029,600
Բ	Համայնքների խոշորացման խրախուսման ծախսեր	16,642,349,000	16,642,349,000
7	Մուբվենցիաներ, դրամաշնորհներ և այլն	16,642,349,000	16,642,349,000
	Ընդամենը ծախսեր	18,506,554,890	18,723,305,332

Վերը նշված ծախսերի գնահատումների հաշվարկներն՝ ըստ առանձին տեսակների և սցենարների, ներկայացված է ստորև:

1. Խոշորացվող համայնքների բնակիչների շրջանում համայնքների խոշորացման բացատրական աշխատանքների կազմակերպման ծախսեր

Խոշորացվող համայնքների բնակիչների շրջանում համայնքների խոշորացման բացատրական աշխատանքները կազմակերպվելու են մի քանի եղանակներով՝

- Հանրապետական հեռուստաալիքներով,

- Մարզային հեռուստաալիքներով,
- Էլեկտրոնային կայքերով,
- Տպագիր մամուլով,
- Տեղերում անմիջական հանդիպումներով:

Համայնքների խոշորացման երկու սցենարների դեպքում էլ հանրապետական հեռուստաալիքներով կազմակերպվելու է «Հայաստանի համայնքների խոշորացում՝ անհրաժեշտ պայման տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման համար» հաղորդաշարը: Այդ հաղորդաշարը կկազմակերպվի անվճար:

Համայնքների խոշորացման երկու սցենարների դեպքում էլ մարզային հեռուստաալիքներով կկազմակերպվեն հաղորդումներ (նաև կլոր սեղանների ձևով)՝ յուրաքանչյուր մարզում՝ երկուական հաղորդում: Ընդհանուր առմամբ կլինեն 20 (2/հաղորդում x 10/մարզ) հաղորդումներ՝ յուրաքանչյուրը 45 րոպե տևողությամբ: Մեկ հաղորդման միջին արժեքը կազմում է 120,000 դրամ, իսկ բոլոր հաղորդումների ընդհանուր արժեքը կկազմի 2,400,000 դրամ (120,000/1 հաղորդման արժեք x 20/հաղորդում):

Էլեկտրոնային կայքերով և տպագիր մամուլով համայնքների խոշորացման լուսաբանումները, հոդվածները և այլ հրապարակումները կլինեն անվճար:

Տեղերում անմիջական հանդիպումների միջոցով բացատրական աշխատանքներ պետք է իրականացվեն խոշորացվող բոլոր համայնքներում: Այդ աշխատանքներում ընդգրկվելու են տեղական ինքնակառավարման ոլորտի փորձագետներ (յուրաքանչյուր համայնք պետք է այցելեն երկու փորձագետներ)՝ վճարովի հիմունքներով: Փորձագետները պետական պաշտոնյաների և պատասխանատուների հետ միասին 1 օրում կայցելեն 2 համայնքներ, իսկ 1 մարդ/օրի արժեքն է 40,000 դրամ:

Համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում բացատրական աշխատանքներ պետք է իրականացվեն խոշորացվող 843 համայնքներում, իսկ դրա համար փորձագետների ծախսը կկազմի 33,720,000 դրամ (40,000/1 մարդ/օրի արժեք x 2/մարդ x 843/համայնքներ : 2/համայնքներ):

Համայնքների խոշորացման երկրորդ սցենարի դեպքում բացատրական աշխատանքներ պետք է իրականացվեն խոշորացվող 910⁴⁰ համայնքներում: Բացատրական աշխատանքների իրականացման համար փորձագետների ծախսը կկազմի 36,400,000 դրամ (40,000/1 մարդ/օրի արժեք x 2/մարդ x 910/համայնքներ : 2/համայնքներ):

Բացատրական աշխատանքների իրականացման համար պահանջվող տրանսպորտային ծախսերը հաշվարկվելու համար պետք է հաշվարկել Երևանից համայնքներ միջին հեռավորությունը: Այն կազմում է 122 կմ⁴¹: Ընդհանուր տրանսպորտային ծախսերը առաջին սցենարի դեպքում կկազմեն 10,284,600⁴² դրամ (122 կմ x 100 դրամ/1 կմ-ի արժեք x 843/համայնքներ): Ընդհանուր տրանսպորտային

⁴⁰ Համայնքների ընդհանուր թվից՝ 915 –ից հանվել է 5 ինքնուրույն (Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Էջմիածին) համայնքները

⁴¹ Հաշվարկը կատարվել է ՀՖՄ-ի կողմից:

⁴² Այս գումարը որոշ չափով կպակասի, եթե մեկ այցելությունն ընդգրկի մեկից ավելի համայնքներ:

ծախսերը երկրորդ սցենարի դեպքում կկազմեն 11,102,000⁴³ դրամ (122կմ x 100դրամ/1կմ-ի արժեք x 910/համայնքներ):

Այսպիսով, խոշորացվող համայնքների բնակիչների շրջանում համայնքների խոշորացման բացատրական աշխատանքների կազմակերպման ծախսերը համայնքների խոշորացման 1-ին սցենարի դեպքում կկազմեն 46,404,600 դրամ (2,400,000/մարզային հեռուստաալիքներով հաղորդումներ+33,720,000/փորձագետների հոնորարներ+10,284,600/տրանսպորտային ծախսեր), իսկ 2-րդ սցենարի դեպքում՝ 49,902,000 դրամ (2,400,000/մարզային հեռուստաալիքներով հաղորդումներ +36,400,000/փորձագետների հոնորարներ +11,102,000/տրանսպորտային ծախսեր):

2. Օրենքների փոփոխությունների և/կամ լրացումների մշակման ծախսեր

Համայնքների խոշորացման հետ կապված օրենքների փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվելու «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներում և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում:

Նշված օրենքներում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարվելու մասին օրենքների նախագծերը պետք է ընդգրկեն հետևյալ հարցերը՝ նոր ձևավորվող համայնքների ցանկը, համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, նոր ձևավորված համայնքներում ՏԻՄ-երի (հատկապես՝ ավագանու) ընտրության կարգը և ժամկետները, դրույթներ համայնքի աշխատակազմի ձևավորման մասին (մասնավորապես՝ համայնքի բնակավայրերում վարչական ներկայացուցչի հաստիքի ամրագրման մասին), ՏԻՄ-երին նոր լիազորությունների փոխանցման և դրանց համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման մասին և այլն: Մոտավոր հաշվարկներով այս աշխատանքների համար կպահանջվի 95 մարդ/օր, իսկ 1 մարդ/օրի արժեքն է 80,000 դրամ: Հետևաբար այս ծախսերը կկազմեն 7,600,000 դրամ (95/մարդ/օր x 80,000դրամ/1 մարդ/օրի արժեք):

Այսպիսով, համայնքների խոշորացման հետ կապված օրենքների փոփոխությունների և/կամ լրացումների ծախսերը երկու սցենարների դեպքում էլ կկազմեն 7,600,000 դրամ:

3. Խոշորացվող համայնքներում ՏԻՄ-երի նոր ընտրությունների անցկացման կազմակերպման ծախսեր⁴⁴

Խոշորացվող համայնքներում ՏԻՄ-երի նոր ընտրությունների անցկացման կազմակերպման ծախսերը հաշվարկվել են՝ համաձայն ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման ծախսերի գործող մեթոդաբանության:

⁴³ Այս գումարը որոշ չափով կպակասի, եթե մեկ այցելությունն ընդգրկի մեկից ավելի համայնքներ:

⁴⁴ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այս ծախսերը կատարվելու էին նաև ՏԻՄ-երի հերթական ընտրությունների ժամանակ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի համաձայն (հոդված 38) ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման համար նախատեսված են ծախսեր ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների համար:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ծախսերը ներառում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահների, նախագահների տեղակալների և հանձնաժողովների քարտուղարների վարձատրությունները, որոնք հավասարեցված են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի վարձատրության չափին՝ 85,132-ական դրամ (2013թ.): Մեկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի մեկ ընտրություն կազմակերպելու ծախսերը կազմում է 255,396 դրամ (85,132 x 3): Հայաստանում գործում են 41 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ, որոնցից 13-ը գտնվում են Երևանում: Բացի Երևանում գտնվող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից, մնացած 28-ը ներգրավված են լինելու ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպմանը համայնքների խոշորացման երկու սցենարների դեպքում էլ: Այդպիսով, խոշորացված բոլոր համայնքների ՏԻՄ-երի նոր ընտրություններ կազմակերպելու համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների ծախսերը երկու սցենարների դեպքում էլ կկազմեն 7,151,088 դրամ (255,396x28 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ):

Մեկ ընտրություն կազմակերպելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովի համար նախատեսված ծախսերը կազմում են 418,232 դրամ (տես ստորև):

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ծախսերը

	Ծախսերը	Գումարը (դրամ)
1	Աշխատողների աշխատավարձեր ու հավելավճարներ այդ թվում	409232.00
	1) հանձնաժողովի նախագահի	85132.00
	2) հանձնաժողովի քարտուղարի	46300.00
	3) հանձնաժողովի անդամների (6 անդամ x 46300 դրամ)	277800.00
2	Տրանսպորտային նյութեր	5000.00
3	Կապի ծառայություններ	1000.00
4	Գրասենյակային նյութեր և հագուստ	3000.00
	ընդամենը՝	418232.00

Հայաստանում գործում են 1988 (2013թ.) տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Եթե ընդունենք, որ համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում ընտրություններ անց չեն կացվելու 15000-ից ավել բնակչություն ունեցող համայնքներում, ապա ՏԻՄ-երի ընտրություններն անց կկացվեն 1121 ընտրական

տեղամասերում (1988/Հայաստանի բոլոր ընտրական տեղամասերը – 867⁴⁵/15000-ից ավել բնակչություն ունեցող համայնքների ՇՏ) և տեղամասային ընտրական հանձնաժողովների ծախսերը կկազմեն 468,838,072 դրամ (1121/ՏՀՀ x 418,232/1ՏՀՀ ծախսեր):

Համայնքների խոշորացման երկրորդ սցենարի դեպքում ընտրություններ անց չեն կացվելու հինգ համայնքներում, որտեղ գործում են 652 ընտրական տեղամասեր⁴⁶: Այս դեպքում ՏԻՄ-երի ընտրություններն անց կկացվեն Հայաստանի մնացած 1336 ընտրական տեղամասերում (1988/Հայաստանի բոլոր ընտրական տեղամասերը – 652/5 համայնքների ՇՏ) և տեղամասային ընտրական հանձնաժողովների ծախսերը կկազմեն 558,757,952 դրամ (1336/ՏՀՀx418,232/1ՏՀՀ ծախսեր):

Քվեաթերթիկների տպագրության ծախսերը ևս հատկացվում են տեղամասային ընտրական հանձնաժողովներին և հաշվարկվում են ընտրողների թվաքանակին ավելացրած 30% և բազմապատկած 1 քվեաթերթիկի տպագրության արժեքով՝ 5 դրամ: Սույն ծախսերը հաշվարկելու համար ընտրողների թիվը վերցված է 2013թ. փետրվարի 18-ի ՀՀ Նախագահի ընտրությունների ընտրողների թիվը, այն է՝ 2,528,000, քանի որ մեկ ամսաթվի դրությամբ ՏԻՄ-երի ընտրությունների ընտրողների թիվ չի հրապարակվում:

Եթե կրկին ընդունենք, որ համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում 15000-ից ավել բնակչություն ունեցող համայնքները չեն ընդգրկվելու համայնքների խոշորացման գործընթացներում, ապա ՏԻՄ-երի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող ընտրողների թիվը կկազմի՝ 1,054,041 մարդ (2,528,000/ՀՀ բոլոր համայնքների ընտրողների թիվ - 1,473,959/15000-ից ավել բնակչություն ունեցող համայնքների ընտրողների թիվ⁴⁷), իսկ քվեաթերթիկների տպագրության ծախսերը՝ 5,428,311 դրամ ((1,054,041/ընտրողների թիվ + 1,054,041 x0,03)x5դրամ/1 քվեաթերթիկի տպագրության արժեք):

Համայնքների խոշորացման երկրորդ սցենարի դեպքում 50000-ից ավել բնակչություն ունեցող հինգ համայնքները չեն ընդգրկվելու համայնքների խոշորացման գործընթացներում, հետևապես ՏԻՄ-երի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող ընտրողների թիվը կկազմի՝ 1,402,490 մարդ (2,528,000/ՀՀ բոլոր համայնքների ընտրողների թիվ - 1,125,510/Երևանի, Գյումրու, Վանաձորի, Էջմիածնի և Հրազդանի ընտրողների թիվ⁴⁸), իսկ քվեաթերթիկների տպագրության ծախսերը՝ 7,222,823 դրամ ((1,402,490/ընտրողների թիվ + 1,402,490x0,03)x5դրամ/1 քվեաթերթիկի տպագրության արժեք):

Ընտրողների ծանուցագրերի ծախսերը ևս հատկացվում են տեղամասային ընտրական հանձնաժողովներին և հաշվարկվում են երկու և ավելի ընտրական տեղամասեր ունեցող համայնքների ընտրողների թվաքանակը բազմապատկած մեկ

⁴⁵ Երևան, Գյումրի, Վանաձոր, Էջմիածին, Հրազդան, Աբովյան, Արմավիր, Ալավերդի, Աշտարակ, Արարատ, Արթիկ, Արտաշատ, Գավառ, Գորիս, Դիլիջան, Իջևան, Կապան, Մասիս, Չարենցավան, Սիսիան, Սպիտակ, Ստեփանավան և Սևան համայնքների ընտրական տեղամասերի ընդհանուր թիվն է:

⁴⁶ 464-ը՝ Երևանում, 79-ը՝ Գյումրիում, 59-ը՝ Վանաձորում, 23-ը՝ Էջմիածնում և 27-ը՝ Հրազդանում:

⁴⁷ Երևանի ընտրողների թիվը 2013թ. մայիսի 5-ի Երևանի ավագանու ընտրությունների թիվն է, իսկ մնացած համայնքներինը 2012թ. սեպտեմբերին կայացած ՏԻՄ-երի ընտրություններինը:

⁴⁸ Երևանի ընտրողների թիվը 2013թ. մայիսի 5-ի Երևանի ավագանու ընտրությունների թիվն է, իսկ մնացած քաղաքներինը 2012թ. սեպտեմբերին կայացած ՏԻՄ-երի ընտրություններինը:

ընտրողի ծանուցագրի արժեքով՝ 98,75 դրամ: Հայաստանի համայնքներից երկու և ավելի ընտրական տեղամասեր ունեն 163 համայնքներ (առանց Երևանի):

Եթե ընդունենք, որ համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում ընտրություններ անց չեն կացվելու 15000-ից ավել բնակչություն ունեցող համայնքներում (թվով 22 համայնքներ), ապա ՏԻՄ-երի ընտրություններն անց կկացվեն երկու և ավելի ընտրական տեղամասեր ունեցող 141 համայնքներում (163-22), որոնց ընտրողների թիվը կազմում է 506,597⁴⁹ մարդ, իսկ ծանուցագրերի ծախսերը կկազմեն 50,026,454 դրամ (506,597/ընտրողներ x 98,75/դրամ):

Համայնքների խոշորացման երկրորդ սցենարի դեպքում 50000-ից ավել բնակչություն ունեցող հինգ համայնքները չեն ընդգրկվելու համայնքների խոշորացման գործընթացներում, հետևապես երկու և ավելի ընտրական տեղամասեր ունեցող համայնքների ՏԻՄ-երի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցող ընտրողների թիվը կկազմի՝ 855,046 մարդ (1,473,959/15000-ից ավել բնակչություն ունեցող համայնքների ընտրողների թիվ - 1,125,510/Երևանի, Գյումրու, Վանաձորի, Էջմիածնի և Հրազդանի ընտրողների թիվ + 506,597/մինչև 15000 բնակիչ ունեցող երկու և ավելի ԸՏ ունեցող 141 համայնքների ընտրողների թիվ), իսկ ծանուցագրերի ծախսերը՝ 84,435,792 դրամ (855,046/ընտրողների թիվ x 98,75/դրամ):

ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման համար ուստիկանությունը ծախսեր է կատարում ընտրողների ցուցակները տպագրելու համար: Այդ ծախսը 1 ընտրողի հաշվով կազմում է 3.9 դրամ: Համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում ուստիկանության ծախսերը կկազմեն 4,110,760 դրամ (1,054,041 x 3.9), իսկ երկրորդ սցենարի դեպքում՝ 5,469,711 դրամ (1,402,490 x 3.9):

Այսպիսով, խոշորացվող համայնքներում ՏԻՄ-երի նոր ընտրությունների անցկացման կազմակերպման ծախսերը համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում կկազմեն 535,554,685 դրամ (7,151,088/ԸԸՀ + 468,838,072/ՏԸՀ + 5,428,311/քվեաթերթիկների տպագրություն + 50,026,454/ծանուցագրեր + 4,110,760/ուստիկանություն), իսկ երկրորդ սցենարի դեպքում՝ 663,037,366 դրամ (7,151,088/ԸԸՀ + 558,757,952/ՏԸՀ + 7,222,823/քվեաթերթիկների տպագրություն + 84,435,792/ծանուցագրեր + 5,469,711/ուստիկանություն):

4. Խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպման ծախսեր

Խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպման ծախսերը հաշվարկվել են համաձայն ՏԻՄ-երի ընտրությունների կազմակերպման ծախսերի գործող մեթոդաբանության:

Այսպիսով, խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների անցկացման կազմակերպման ծախսերը համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում կկազմեն 535,554,685 դրամ (7,151,088/ԸԸՀ + 468,838,072/ՏԸՀ + 5,428,311/քվեաթերթիկների տպագրություն + 50,026,454/ծանուցագրեր + 4,110,760/ուստիկանություն), իսկ երկրորդ սցենարի դեպքում՝ 663,037,366 դրամ (7,151,088/ԸԸՀ + 558,757,952/ՏԸՀ +

⁴⁹ 2012թ. կայացած ՏԻՄ-երի ընտրությունների թիվն է:

7,222,823/քվեաթերթիկների տպագրություն + 84,435,792/ծանուցազրեր + 5,469,711/ուստիկանություն):

5. Լուծարվող և վերակազմակերպվող համայնքների այն աշխատակիցներին, որոնք դուրս են մնում աշխատանքից արձակման նպաստների հատկացում՝ մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով

Այս ծախսերի հաշվարկները կատարվել են ըստ լուծարվող և վերակազմակերպվող համայնքների դուրս մնացող աշխատակիցների թվաքանակի հաշվարկի և համայնքների աշխատակազմերի միջին աշխատավարձերի:

Համայնքների աշխատակազմերի միջին աշխատավարձերի վերաբերյալ պաշտոնական տվյալներ չկան: Միակ պաշտոնական տվյալը համայնքային ծառայողների միջին աշխատավարձի վերաբերյալ տվյալն է: Այսպես, 2012թ. ՀՀ համայնքային ծառայողների (առանց Երևանի) միջին աշխատավարձը կազմել է 74,680 դրամ⁵⁰:

Համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում մեկ խոշորացված համայնքի կտրվածքով աշխատանքից դուրս է մնալու 36 մարդ, իսկ Հայաստանի մասշտաբով 8460 մարդ (235/համայնք x 36/մարդ): Հայաստանի մասշտաբով համայնքների աշխատակիցների արձակման նպաստի գումարը մոտավոր հաշվարկներով կկազմի 631,792,800 դրամ (8460/մարդx74,680/դրամ):

Համայնքների խոշորացման երկրորդ սցենարի դեպքում մեկ խոշորացված համայնքի կտրվածքով աշխատանքից դուրս է մնալու 180 մարդ, իսկ Հայաստանի մասշտաբով 8280 մարդ (46/համայնք x 180/մարդ): Հայաստանի մասշտաբով համայնքների աշխատակիցների արձակման նպաստի գումարը մոտավոր հաշվարկներով կկազմի 6182,354,040 դրամ (8280/մարդx74,680/դրամ):

6. Խոշորացված համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների և համայնքային ծառայողների վերապատրաստման ծախսեր

Խոշորացված համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների և աշխատակազմերի վերապատրաստման ծախսերը հաշվարկվել են 2012 և 2013թթ. մեկ համայնքային ծառայողի և մեկ ՏԻՄ-ի ներկայացուցչի հաշվով կատարված վերապատրաստման ծախսերի և սպասվելիք վերապատրաստվողների թվաքանակի հիման վրա: Մեկ համայնքային ծառայողին ընկնող վերապատրաստման ծախսերը 2012-ին կազմել է 30,728 դրամ, իսկ 2013-ի համար պլանավորվել է 30,760 դրամ: Մեկ համայնքի ավագանուն և ղեկավարին ընկնող վերապատրաստման ծախսերը 2012-ի համար կազմել է, իսկ 2013թ համար պլանավորվել է 9,312 դրամ:

Համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում նոր ձևավորված համայնքների ավագանիների անդամների մեկ համայնքին ընկնող միջին թիվը կկազմի 15 մարդ, իսկ բոլոր նոր ձևավորված համայնքներին՝ 3525 մարդ(15/ավագանու անդամներ x 235/համայնք): ՏԻՄ-երի վերապատրաստման ծախսերը կկազմեն 35,013,120 դրամ ((3525/ավագանիների անդամներ + 235/համայնքների ղեկավարներ) x 9,312/դրամ):

⁵⁰ Տվյալը վերցված է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից:

Մեկ համայնքին ընկնող համայնքային ծառայողների միջին թիվը կկազմի 10 մարդ, իսկ Հայաստանի մասշտաբով՝ 2350 մարդ (10/մարդ x 235/համայնքներ): Համայնքային ծառայողների վերապատրաստման ծախսերը կկազմեն 72,286,000 դրամ (2350/մարդ x 30,760 դրամ): Այսպիսով, առաջին սցենարի դեպքում խոշորացված համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների և աշխատակազմերի վերապատրաստման ընդհանուր ծախսերը կկազմեն 107,299,120 դրամ (35,013,120/ՏԻՄ-երի վերապատրաստման ծախսեր + 72,286,000/համայնքային ծառայողների վերապատրաստման ծախսեր):

Համայնքների խոշորացման երկրորդ սցենարի դեպքում նոր ձևավորված համայնքների ավագանիների անդամների մեկ համայնքին ընկնող միջին թիվը կկազմի մոտավորապես 30 մարդ, իսկ բոլոր նոր ձևավորված համայնքներին՝ 1500 մարդ(30/ավագանու անդամներ x 50/համայնք⁵¹): ՏԻՄ-երի վերապատրաստման ծախսերը կկազմեն 14,433,600 դրամ ((1500/ավագանիների անդամներ + 50/համայնքների ղեկավարներ) x 9,312/դրամ): Մեկ համայնքին ընկնող համայնքային ծառայողների միջին թիվը կկազմի 42 մարդ, իսկ Հայաստանի մասշտաբով՝ 2100 մարդ (42/մարդ x 50/համայնքներ): Համայնքային ծառայողների վերապատրաստման ծախսերը կկազմեն 64,596,000 դրամ (2100/մարդ x 30,760 դրամ): Այսպիսով, երկրորդ սցենարի դեպքում խոշորացված համայնքների ղեկավարների, ավագանիների անդամների և աշխատակազմերի վերապատրաստման ընդհանուր ծախսերը կկազմեն 79,029,600 դրամ (14,433,600+64,596,000):

7. Կապիտալ ներդրումների ծրագրեր իրականացնելու համար խոշորացվող համայնքներին սուբվենցիաներ (դրամաշնորհներ և այլն) տրամադրելու ծախսեր

Խոշորացվող համայնքներին սուբվենցիաների (դրամաշնորհների և այլնի) տրամադրման հետ կապված ծախսերը հաշվարկվել են ըստ տիպային ծրագրերի⁵² (մանկապարտեզի, մշակույթի տան/ակումբի, բուժ.կետի, դպրոցի շենքի վերանորոգում, վերակառուցում կամ ընդարձակում) ծախսերի, ընդ որում, առաջին սցենարի դեպքում՝ մեկ խոշորացված համայնքում մեկ ծրագիր սկզբունքով, իսկ երկրորդ սցենարի դեպքում՝ առաջին սցենարի ընդհանուր գումարը համամասնորեն ըստ համայնքների բաշխման սկզբունքով:

Մեկ մանկապարտեզի կապիտալ վերանորոգման ծախսերը վերցվել են Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի (ՀՄՆՀ) 2012թ. ֆինանսավորմամբ ավարտված մանկապարտեզների վերանորոգման (վերակառուցման) ծրագրերի միջին արժեքը՝ 75,954,000 դրամ:

Մեկ մշակույթի տան կապիտալ վերանորոգման ծախսերը վերցվել են ՀՄՆՀ-ի 2012թ. ֆինանսավորմամբ ավարտված համայնքների կենտրոնների վերանորոգման (վերակառուցման) ծրագրերի միջին արժեքը՝ 82,086,000 դրամ:

⁵¹ Այս մասով հաշվարկները կատարված է խոշորացվող 50 (բացի Երևանից) համայնքների համար:

⁵² Տիպային ծրագրերը ընտրվել են ըստ «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի» համայնքների խոշորացման չափորոշիչների, ծախսերը հաշվարկվել են ըստ ՀՄՆՀ-ի 2012թ. տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվության:

Մեկ բուժ.կետի կապիտալ վերանորոգման ծախսերը վերցվել են ՀՄՆՀ-ի ֆինանսավորմամբ 2012թ. վերջի դրությամբ ավարտված առողջապահական կենտրոնների վերանորոգման (վերակառուցման) ծրագրերի միջին արժեքը՝ 56,933,000 դրամ:

Մեկ դպրոցի կապիտալ վերանորոգման ծախսերը վերցվել են ՀՄՆՀ-ի 2012թ. ֆինանսավորմամբ ավարտված դպրոցների վերանորոգման (վերակառուցման) ծրագրերի միջին արժեքը՝ 68,492,000 դրամ:

Այսպիսով, համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում՝ եթե ընդունենք, որ խոշորացված նոր 235 համայնքներում իրականացվելու են մեկական ծրագրեր՝ ընդ որում վերը նշված 4 տեսակի ծրագրերը բաշխվելու են հավասար թվով համայնքներում, ապա կստացվի, որ 59 համայնքներում կվերանորոգվեն/կվերակառուցվեն մանկապարտեզներ, 58 համայնքներում՝ մշակույթի տներ, 59 համայնքներում՝ բուժ.կետեր և 59 համայնքներում դպրոցներ: Համայնքների խոշորացման առաջին սցենարի դեպքում սուբվենցիաների (դրամաշնորհների և այլնի) ընդհանուր գումարը կկազմի 16,642,349,000 դրամ ($59 \times 75,954,000 + 58 \times 82,086,000 + 59 \times 56,933,000 + 59 \times 68,492,000$):

Համայնքների խոշորացման երկրորդ սցենարի դեպքում էլ սուբվենցիաների (դրամաշնորհների և այլնի) ընդհանուր գումարը կկազմի 16,642,349,000 դրամ, որը համասնորեն կբաշխվի 56 համայնքների միջև:

II. Խոշորացվող համայնքների բյուջեներից կատարվելիք ծախսերի գնահատում

1. Խոշորացվող համայնքների լուծարման գործընթացի իրականացման ծախսեր՝ նրանց ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցումից հանելու համար

Պետական ռեգիստրում գրանցման ենթակա ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափը սահմանված է բազային տուրքի (1000 դրամ) հնգապատիկի չափով՝ 5,000 դրամ⁵³:

Համայնքների խոշորացման 1-ին սցենարի դեպքում խոշորացվելու են 843 համայնքներ, հետևաբար դրանց լուծարման գործընթացի իրականացման ծախսերը կկազմեն 4,215,000 դրամ ($5,000$ դրամ / 1 համայնքի լուծարման գործընթացի իրականացման ծախսեր $\times 843$ համայնք):

Համայնքների խոշորացման 2-րդ սցենարի դեպքում խոշորացվելու են 910 համայնքներ, հետևաբար դրանց լուծարման գործընթացի իրականացման ծախսերը կկազմեն 4,550,000 դրամ ($5,000$ դրամ / 1 համայնքի լուծարման գործընթացի իրականացման ծախսեր $\times 910$ համայնք):

⁵³ Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի 1.4 կետի

2. Խոշորացվող համայնքների սեփականություն համարվող գույքի գույքագրման, նոր ձևավորվող համայնքի սեփականությանը հանձնման, ընդունման, տեղափոխման և համայնքի վարչական շենքերում տեղադրման ծախսեր

Խոշորացվող համայնքների սեփականություն համարվող գույքի գույքագրումը և նոր ձևավորվող համայնքի սեփականությանը հանձնումը կկատարվի օրենքով սահմանված կարգով, դրա համար նոր ձևավորվող համայնքի բյուջեից ծախսեր չեն պահանջվի: Ծախսերի կատարման անհրաժեշտություն կառաջանա միայն խոշորացվող համայնքներից ընդունված սեփականության գույքի վերաբաշխման, տեղափոխման և համայնքի վարչական շենքերում տեղադրման ժամանակ: Դրանք հիմնականում կլինեն տրանսպորտային ծախսերի (վառելիքի կամ տրանսպորտային միջոցի վարձման) և բանվորական աշխատուժի վարձատրության ծախսերի տեսքով: Փորձագիտական գնահատմամբ, խոշորացվող յուրաքանչյուր համայնքի համար այդ ծախսերի չափը կկազմի մոտ 20,000 դրամ:

Համայնքների խոշորացման 1-ին սցենարի դեպքում, 843 խոշորացվող համայնքների համար այդ ծախսերը կկազմեն 16,860,000 դրամ (20,000 դրամ x 843 համ.):

Համայնքների խոշորացման 2-րդ սցենարի դեպքում, 910 խոշորացվող համայնքների համար այդ ծախսերը կկազմեն 18,200,000 դրամ (20,000 դրամ x 910 համ.):

3. Նոր ձևավորվող համայնքի համար անվանափոխման, նոր կլոր կնիքի, դրոշմակնիքի, ձևաթղթերի, ցուցանակների և այլ նմանատիպ անհրաժեշտ պարագաների պատրաստման, նոր հաշվեհամարի բացման ծախսեր

Նոր ձևավորվող համայնքի անվանափոխման դեպքում անհրաժեշտություն կառաջանա՝ նրան ստանալու նոր պետական գրանցում: Պետական ռեգիստրում գրանցման ենթակա ոչ առևտրային կազմակերպությունների պետական գրանցման կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների հաշվառման համար պետական տուրքի դրույքաչափը սահմանված է բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 10,000 դրամ⁵⁴:

Նոր ձևավորվող համայնքի համար զինանշանով նոր կլոր կնիքի, դրոշմակնիքի, ցուցանակի պատրաստման համար պահանջվում է 8,000 - 12,000 դրամ (յուրաքանչյուրի համար)՝ մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում «Տեխնիկա+» ՓԲԸ-ը պատվիրելու և ստանալու համար⁵⁵: Յուրաքանչյուր պարագայի պատրաստման ծառայության վճարը վերցնելով միջինը 10,000 դրամ, կստացվի, որ նոր ձևավորվող համայնքի համար կլոր կնիքի, դրոշմակնիքի և ցուցանակի պատրաստման համար անհրաժեշտ է մոտ 30,000 դրամ:

Նոր ձևավորվող համայնքի համար նոր հաշվեհամարի բացումը ՀՀ գանձապետական համակարգում կատարվում է անվճար:

⁵⁴ Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի 1.3 կետի

⁵⁵ Կնիքի, դրոշմակնիքի, ցուցանակի և այլ պարագաների պատրաստման համար ծառայության վճարները սահմանվել են «Տեխնիկա+» ՓԲԸ խորհրդի կողմից՝ ելնելով տվյալ պարագայի տեխնիկական պահանջներից և չափից

Ընդհանրացնելով, նոր ձևավորվող 1 համայնքի այս լրացուցիչ ծախսերի համար կպահանջվի մոտ 40,000 դրամ:

Համայնքների խոշորացման 1-ին սցենարի դեպքում, նոր ձևավորվող 235 համայնքների համար այդ ծախսերը կկազմեն 9,400,000 դրամ (40,000 դրամ / 1 համայնքի ծախսեր x 235 համայնք):

Համայնքների խոշորացման 2-րդ սցենարի դեպքում, նոր ձևավորվող 50 համայնքների համար այդ ծախսերը կկազմեն 1,840,000 դրամ (40,000 դրամ / 1 համայնքի ծախսեր x 46 համայնք):

4. Նոր ձևավորվող համայնքի աշխատակազմում համայնքային ծառայության նոր թափուր տեղերը զբաղեցնելու համար մրցույթների կազմակերպման ծախսեր

Նոր ձևավորվող համայնքի աշխատակազմում համայնքային ծառայության նոր թափուր տեղերը զբաղեցնելու համար մրցույթների կազմակերպման հայտարարություններն անվճար հիմունքներով տրվում են www.azdarar.am համացանցային կայքում: Մրցույթների կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը վերաբերում են միայն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի համար նախատեսված թեստերի և այլ նյութերի տպագրման և/կամ պատճենահանման և մրցույթի մասնակիցներին տրամադրման աշխատանքներին: Նոր թափուր 1 տեղը զբաղեցնելու մրցույթի կազմակերպման ծախսերը կկազմեն ոչ ավելի, քան 1,000 դրամը:

Համայնքների խոշորացման 1-ին սցենարի դեպքում, նոր ձևավորվող համայնքի աշխատակազմում համայնքային ծառայության նոր պաշտոններ չեն նախատեսվում (համաձայն «Գառնու փունջ» համայնքի աշխատակազմի համար առաջարկվող հաստիքային ցուցակի), հետևաբար համապատասխան մրցույթների կազմակերպման ծախսեր չեն ակնկալվում:

Համայնքների խոշորացման 2-րդ սցենարի դեպքում, նոր ձևավորվող համայնքի աշխատակազմում նախատեսվում են համայնքային ծառայության 15 նոր պաշտոններ (համաձայն «Նաիրիի շրջան» համայնքի աշխատակազմի համար առաջարկվող հաստիքային ցուցակի), հետևաբար նոր ձևավորվող 46 համայնքների աշխատակազմերում համապատասխան մրցույթների կազմակերպման ծախսերը կկազմեն մինչև 690,000 դրամ (1,000 դրամ / համայնքի աշխատակազմի համայնքային ծառայության նոր 1 թափուր տեղը զբաղեցնելու մրցույթի կազմակերպման ծախսեր x համայնքային ծառայության 15 նոր պաշտոններ x 46 համայնք):

5. Նոր ձևավորվող համայնքի աշխատակազմի և բնակավայրերի վարչական ներկայացուցիչների միջև անխափան կապի ապահովման ծախսեր

Ֆիքսված հեռախոսակապի ուղիղ գծի տրամադրման սակագինը 50,000 դրամ է, հեռախոսի տեղադրման սակագինը՝ 2,400 դրամ⁵⁶, իսկ հեռախոսի սարքի ձեռքբերման գինը՝ մոտ 15,000 դրամ, հետևաբար նոր ձևավորվող համայնքի կազմում ընդգրկված 1

⁵⁶ www.beeline.am

բնակավայրի համար ֆիքսված հեռախոսակապի ապահովման ծախսերը կկազմեն 67,400 դրամ:

Միջին որակի բջջային հեռախոս կարելի գնել մոտ 30,000 դրամով, բջջային հեռախոսային SIM-քարտ՝ 4,000 դրամով, հետևաբար նոր ձևավորվող համայնքի կազմում ընդգրկված 1 բնակավայրի 1 վարչական ներկայացուցչի համար բջջային հեռախոսակապի ապահովման ծախսերը կկազմեն 34,000 դրամ:

Նոր ձևավորվող համայնքի կազմում ընդգրկված 1 բնակավայրի համար ինտերնետային կապի ապահովման ծախսերը կկազմեն մինչև 10,000 դրամ⁵⁷:

Համայնքների խոշորացման 1-ին սցենարի դեպքում, խոշորացվող 843 համայնքների միջև անխափան կապի ապահովման ծախսերը կկազմեն մոտ 93,910,200 դրամ ((67,400 դրամ / 1 բնակավայրի համար ֆիքսված հեռախոսակապի ապահովման ծախսեր + 34,000 դրամ / 1 բնակավայրի 1 վարչական ներկայացուցչի համար բջջային հեռախոսակապի ապահովման ծախսեր + 10,000 դրամ / 1 բնակավայրի համար ինտերնետային կապի ապահովման ծախսեր) x 843 համայնք):

Համայնքների խոշորացման 2-րդ սցենարի դեպքում, խոշորացվող 910 համայնքների միջև անխափան կապի ապահովման ծախսերը կկազմեն մոտ 101,374,000 դրամ ((67,400 դրամ / 1 բնակավայրի համար ֆիքսված հեռախոսակապի ապահովման ծախսեր + 34,000 դրամ / 1 բնակավայրի 1 վարչական ներկայացուցչի համար բջջային հեռախոսակապի ապահովման ծախսեր + 10,000 դրամ / 1 բնակավայրի համար ինտերնետային կապի ապահովման ծախսեր) x 910 համայնք):

6. Խոշորացվող համայնքների ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ արտաքին աուդիտի անցկացման ծախսեր

Համայնքի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ արտաքին աուդիտի անցկացման ծախսերի չափը կախված է համայնքի մեծությունից և գործնականում տատանվում է 100,000 դրամից մինչև 2,000,000 դրամի սահմաններում: Մեկ համայնքում արտաքին աուդիտի անցկացման ծախսերի միջինացված չափն ընդունելով մոտ 300,000 դրամ, կարելի է մոտավոր գնահատել խոշորացվող բոլոր համայնքներում այդ ծախսերի չափը:

Համայնքների խոշորացման 1-ին սցենարի դեպքում, 843 խոշորացվող համայնքների համար այդ ծախսերը կկազմեն 252,900,000 դրամ (300,000 դրամ x 843 համայնք):

Համայնքների խոշորացման 2-րդ սցենարի դեպքում, 910 խոշորացվող համայնքների համար այդ ծախսերը կկազմեն 273,000,000 դրամ (300,000 դրամ x 910 համայնք):

⁵⁷ Ենթադրվում է, որ նոր ձևավորվող համայնքում ընդգրկված բնակավայրերում ֆիքսված հեռախոսակապը և ինտերնետային կապն անցկացված են և անխափան գործում են: